№ 65 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 22 — 1908 — ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 22 № 65

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Ամսական Մէկ ռուբլի
Ամերիկա տարեկան „ 6 դոլլար
Եւրոպա „ „ „ 30 ֆրանկ
Պարսկաստան „ „ „ 10 ռուբլի

Թիֆլիսի վաճառականների աւագ

ԱՐ. Ն. ՄԻԼՕՎ

խնդրում է Թիֆլիսի պ. պ. վաճառականներից,

որոնք ընտրում են դասակարգային վկայականներ, շնորհ բերել կիրակի, մարտի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, ընդհանուր ժողովին, որ տեղի է ունենալու Թիֆլիսի բօրսայի շինութեան մէջ, Արմեանակի բազար, Քաղաքային Կրէդիտային Ընկերութեան տան մէջ, հետեւեալ հարցերը քննելու համար.

1) Առեւտրական դուժարների ելևմուտքի հաշիւը 1907 թւի համար։
2) Թիֆլիսի առեւտրական դպրոցի նիւթական դրութեան հետ կապ ունեցող հարցերի քննութիւնը։
3) Թիֆլիսի առեւտրի և մանուֆակտուրայի կօմիտէի նախագահի և անդամների ընտրութիւնը նոր եռամեակի համար։
4) Թիֆլիսի օրբերի դատարանի երկու անդամի և նրանց երկու կանդիդատի ընտրութիւնը նոր եռամեակի համար։
5) Վերատուգող յանձնաժողովի երկու անդամի և նրա մէկ կանդիդատի ընտրութիւնը 1908 թւի համար։
6) Վաճառականների աւագի և նրա երկու ընկերների ընտրութիւնը 1908 թւի համար։

1—1 ա.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

պատիւ ունի հրաւիրելու մեծարգոյ անդամներին ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովին, որ կայանալու է մարտի 22-ին, երեկոյեան ուղիղ ժամը 7-ին, Թիֆլիսի բօրսայի դահլիճում (Армянскій базаръ, домъ Кредитнаго Общества, рядомъ съ магазиномъ Адельханова).

Զբաղմունքի առարկաներն են՝

1) Գ. Արեշեանից գնած տունը քանդելու և նորը կառուցանելու խնդիրը։
2) Հայոց Դրամատիկական ընկերութեան խնդիրը՝ յանձնելու նրան հանդուցեալ դերասան Պետրոս Ադամեանի իրերը ի պահպանութիւն։
3) Ընտրութիւն վերատուչիչ յանձնաժողովի անդամների։
4) Ընթացիկ հարցեր։

(չ. ու. չ.) առ. 3—3

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՒ ԴՕՄԻՍԻՕՆԱԿԱՆ ԴՐԱՄԵՆԵԱԿԸ

Առաջարկում է իր ծառայութիւնները դրամագլուխներ հայթայթելու համար արդիւնաբերական և լեռնային ձեռնարկութիւնների զբաւականով։ Իր հաշւով հետազօտել է տալիս իրան առաջարկված իւրաքանչիւր լուրջ գործ։

Հասցէն՝ Banque Denis et C-ie, 33, rue Le Peletier, Парижъ.

(օ. ա.) 10—10

„ՅՈՒԹԱՐԱՐԻ“
բովանդակութիւնը 4-րդ երեսում։

Մարտի 16, կիրակի օրից
ԲԱՑԷ
Նկարիչ ԱՐՇԱԿ ՓԷՓՎԱՃԵԱՆԻ
ԶՈՒՏ
ԱԿՎԱՐԷԼՆԵՐԻ
Ցուցահանդէսը
Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.
Բարեսիրական փողոց.
Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։
Մուտքը արժէ 30 կոպէկ։
Աշակերտները և դիւրորները վճարում են կէսը։

(օ. ա.) առ. 20—5

ՔԱՅՔԱՅՄԱՆ ԴԷՄ

Գիւղական ազգաբնակութեան մի խոշոր մասը այսօր չէ կարողանում ապահովել իր կարիքները հողագործութեան արդիւնքներով և որոնում է կողմնակի աշխատանքներ իր համար։ Եթէ նա գտնէր այդ աշխատանքները իր շրջակայքում, նա այդտեղ էլ կը զբաղվէր նրանցով, չը տարագրվելով հեռու տեղեր։ Բայց երբ այդ չը կայ, նա ստիպված է պանդխտել ուրիշ տեղեր։

—Եթէ մեր գաւառում լինէին մի քանի խոշոր գործարաններ, մենք նրանց աչքի լոյսի պէս կը պահպանէինք։

Այդպէս էր ասում գիւղից եկած պանդուխտների մի խումբ, որ աշխատանք էր որոնում Թիֆլիսում։

—Աշխատանքի տեղեր չը կան. ուրիշ տեղեր պէտք է գնանք ապրուստ ճարելու,—յայտնում են գիւղացիները։

Եւ ահա մենք տեսնում ենք, որ պանդուխտների շարաններ դիմում են Թիֆլիս, Բագու, Բաթում, և երբ այդ տեղերումն էլ չեն գտնում բաւականաչափ գործ, անցնում են աւելի հեռուները՝ դէպի Անդրկասպեան երկիր, Հիւսիսային Կովկաս, Հարաւային Ռուսաստան։

Աշխատանքի ապրիւրների այդ որոնման, պանդուխտների աստանդական այդ ջղային երթևեկութեան ժամանակ ստարոտի է թւում, երբ լսում ես թէ Բաթումի մէջ գործարաններ փակվեցին, Բագուի նաւթային շրջանում արդիւնագործական ձեռնարկութիւնները կրճատվեցին և գանազան քաղաքներում արհեստանոցներ քայքայվեցին այն պատճառով, որ աշխատաւորների և գործարանատէրերի միջև չը կարողացաւ համաձայնութիւն կայանալ։

Եթէ բացառիկ մի երևոյթի հետ գործ ունենայինք, մենք անշուշտ կանգ չէինք առնի նրա վրա առանձին կերպով. բայց նա բացառիկ չէ և կեանքի մէջ շատ անգամ է նա խօսեցնել տալիս իր մասին։

Անշուշտ աշխատանք ասուղը և աշխատանք կատարողը, մշտական սակարկութեան մէջ գտնվելով, սպասում են զիջումների մէկը միւսի կողմից, սակայն այդ զիջումների պատնէշը պէտք է այնպիսի շրջանակներում կատարվի, որ մի կողմից աշխատաւորը կաջողանայ չափ լաւ վարձատրվի և միւս կողմից արդիւնագործութիւնը, իբրև ձեռնարկութիւն, չը վտանգվի։

Գործարանատէրերը պէտք է զսպեն իրանց ախորժակները և չը սպասեն արդիւնագործութիւնից չափազանց տոկոսներ, աշխատաւորներն էլ պէտք է չը բարձրացնեն իրանց պահանջները այն աստիճան, որ արդիւնագործութիւնը դառնայ վնասատու մի ձեռնարկութիւն։ Եւ աշխատաւորի բերանից չը պէտք է հեշտութեամբ դուրս գայ այն նախադասութիւնը, որ սովորական էր դարձել վերջին երեք տարիներում՝—«թող փակվի արհեստանոցը»։

Ոչ, չը պէտք է փակվի։

Դա է տնտեսական առողջ պահանջը։

Եւ ոչ միայն նա չը պէտք է փակվի, այլ և ընդհակառակը պէտք է նա այնպիսի պայմանների մէջ դրվի, որ հնարաւորութիւն ունենայ ամրանալ և ընդարձակվել, հաստատ և խելացի հիմքերի վրա դնելով իր գործունէութիւնը։

Գործարանի և արհեստանոցի գոյութեան, նրանց մէջ գործող աշխատաւորների կանոնաւոր գործունէութեան և ընդհանուր ձեռնարկութեան աջողութեան մասին պէտք է միաժամանակ հոգատար լինեն թէ գործարանատէրը և թէ աշխատաւորները, լաւ ըմբռնելով կուլտուրական գործառնութիւնների նշանակութիւնը երկրի և ժողովրդի համար։

Եւ եթէ որոշ դէպքերում այս կամ այն ձեռնարկութիւնը վտանգվում է, դա պէտք է հետևանք լինի ոչ թէ բմսահոյքների և աններելի տարաձայնութիւնների, այլ արդիւնք լուրջ տնտեսական ազդեցութիւնների, որոնք կրում են անխուսափելի պատճառների բնաւորութիւն։

Եւ երբ վրա են հասնում ծանր տնտեսական տագնապներ, անհրաժեշտ է, որ հանդէս գան աշխատաւորների ու գործարանատէրերի միացեալ խորհրդակցութիւններ՝ փրկելու անկումից և քայքայումից եղած արդիւնագործութիւնը։

Ասելով այս բոլորը, մենք ասենք չենք գրաւվում հովվերգական համերաշխութեան հեռանկարներով գործարանատէրերի և աշխատաւորների վերաբերութեամբ։ Մենք գիտենք, որ այդ երկու դասակարգերի միջտեղում մշտապէս կանգնած է սակարկութեան ոգին և զիջումներ է թելադրում այս կամ այն կողմի համար։ Այո, այդ այդպէս է։ Բայց մենք չենք կարող հաշտվել և այն գրութեան հետ, երբ արդիւնագործական աշխատանքը վտանգվում է թէ աշխատաւորին զրկելով գործից և թէ քայքայելով կուլտուրական ձեռնարկութիւնը։

Մեր երկրի ապագայի, մեր ազգաբնակութեան տնտեսական բարեկեցութեան համար անհրաժեշտ է արդիւնագործութեան զարգացումը։ Ուստի աշխատանքի և գրամագլխի միջև եղած բանակցութիւնները չը պէտք է այն բնաւորութիւնը ստանան, որ բացասեն միմեանց և չը կարողանան փոխադարձութեան որևէ կէտի վրա կանգնել։

Արդիւնագործութեան զարգացման հոգսը պէտք է միաժամանակ ծանրանայ թէ գործարանատէրի, թէ աշխատաւորի և թէ հասարակական-տնտեսական առաջադիմութեան ջատագով կազմակերպութիւնների վրա։

Դա անհրաժեշտութեան թելադրութիւնն է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 21 մարտի

Վերջին տեղեկութիւնների համաձայն Վանում սպանվել են 60, վիրաւորվել են 50 հայեր։

Մարտի 17-ին, Եաֆֆայում, մի քանի հրէաներ մի կնոջ պատճառով ընդհարվեցին մահմեդականների հետ և լուրջ կերպով վիրաւորեցին նրանցից մէկին։ Նոյն օրը ոստիկանութիւնը ռուսաց հիւպատոսարանի կավասի (պահապան) հետ մտաւ այն հիւրանոցը, ուր հրէաները տօնում էին իրանց պուրիմ տօնը, և ձերբակալեց յարձակման մասնակցողներին, չը նայած որ նրանք գինված դիմադրութիւն ցոյց տուին։ Ձերբակալվածները ռուսահպատակներ երևացին։ Ապա արդէն առանց կավասի, ոստիկանութիւնը մի քանի արաբների հետ միասին վերադարձաւ հիւրանոց և սկսեց կրակել նրա մէջ գտնվող հրէաների վրա։ Ոչ ոք չը սպանվեց, բայց 13 ռուսահպատակներ և մի ամերիկացի վիրաւորվեցին։ Ռուսաց դեսպանը պահանջեց անմիջապէս քննութիւն բանալ և մեղաւորներին պատժել։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 21 մարտի

Ռուսաց դեսպանը Դրէյին յանձնեց ռուսաց կառավարութեան նօտան Մակեդոնիայի վերաբերութեամբ։ Ներկայումս այդ առիթով տեղի է ունենում մտքերի փոխանակութիւն։ («Հ. Գ.»)

—

Թիֆլիս, 20 մարտի

Թիֆլիսի նահանգական մատակարարական յանձնաժողովը իր վերջին նիստում որոշեց. 1) խնդրել Կովկասի Փոխարքայի դիւանատան, որ Թիֆլիսի նահանգապետի տրամադրութեան տակ դրվի կրկին 100,000 ռուբլի Անդրկովկասի ազգաբնակութեան մատակարարական պէտքերի համար. 2) Դուշէթի մատակարարական մասնաժողովին փոխադրել 5000 ռուբլի՝ սերմացուի համար ցորեն գնելու. 3) Գօրու մատակարարական մասնաժողովի պէտքերի համար յատկացնել կրկին 3000 ռուբլի, արդէն ուղարկված 2000 ռուբլուց բացի։

Նոյն նիստում գործադիր մասնաժողովը տեղեկացրեց, որ Օդեսայից «Նիկոլայ Փրիզնօվ և որդիք» ֆիրմայի անունով արդէն ուղարկված է ցորեն, որ տեղս կը հասնի մօտաւորապէս ապրիլ ամսի սկիզբներին։

—

Լօնդոն, 20 մարտի

Լիբերալ Վեչվուդը կառավարութեանը ուղղած հարցապնդումով հարց յարուցեց, որ կառավարութիւնը օգտվի Պարսկաստանում ունեցած իր ազդեցութիւնից, որպէսզի պարսկական մարքսատան մէջ, անգլիական ազդեցութեան շրջանի սահմաններում, պաշտօնեաներ նշանակելու ժամանակ առաւելութիւնը անգլիացիներին տրվի։

Ֆինանսական վարչութեան ստատս-սեկրէտարը պատասխանեց, որ կառավարութիւնը մտադիր չէ բնաւ առանց որևէ կարիքի խափանել գոյութիւն ունեցող կարգը։

Այն հարցին, թէ անգլիական կառավարութեանը յայտնի է, արդեօք, որ պարսից կառավարութիւնը մտադիր է մաքսատան բելգիացի ծառայողներին գերմանացիներով փոխարինել,—ստատս-սեկրէտարը յայտնեց, որ այդպիսի տեղեկութիւն ամենևին չէ ստացվել, սակայն գերմանական կառավարութիւնը յայտնել է Գրէյին, որ նա մաքսատան ծառայողների ազգայնութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չէ ցանկանում։ («Հ. Գ.»)

—

Նիւ-Եորկ, 20 մարտի

Քարածուխի հանքերում աշխատանքները դադարելու պատճառով երկրի զանազան տեղերում արձակել են 250 հազար բանուորների։ («Հ. Գ.»)

—

Հանգկօնգ, 21 մարտի

Օրէ-ցօր աճում, ընդարձակ չափեր է ընդունում եապօնական ապրանքների դէմ ուղղված շարժումը։ Կանտոնում եապօնական քարածուխով բեռնված երկու նաւեր մնում են կանգնած, և կուլիները հրաժարվում են դատարկել։ Չին վաճառականները յորդորվում են եապօնական նաւերով ապրանք չուղարկել։ («Հ. Գ.»)

—

Թիւրք կառավարութիւնը ներկայումս ուսումնասիրում է Էրզրում-Էնկիւրիւ երկաթուղագծի շինութեան հարցը։ Այդ երկաթուղագիծն էլ, Մէկքէի երկաթուղու նման, կառուցվելու է ժողովրդական հանգանակութեամբ։

Դիպլոմատիական շրջաններում յատուկ լուրեր են պատում, թէ ռուս կառավարութիւնն էլ, որպէս հակազդեցութիւն թիւրքական այդ ծրագրի, համաձայն Թիւրքիայից 1903 թւին ստացած իր կօնցեսսիայի, մօտիկ ապագայում ձեռնարկելու է Կարսէրզրում երկաթուղագծի կառուցմանը։

—

Տրապիզօն, 2 մարտի

Թիւրքական այն շոգենաւերը, որոնք ռազմամթերք էին փոխադրում Տրապիզօն, ճանապարհին ռուսական պատերազմական նաւերի կողմից արգելվեցին իրանց ճանապարհը շարունակել։ Ռուսները պատճառ էին բերում այն հանգամանքը, որ թիւրքական յիշեալ նաւերը ռուսական ջրերումն էին գտնվում։

—

Հօղէյդայից, մարտի 2-ից, հեռագրում են «Frank. zeit.» լրագրին.

Թիւրք զօրքերի հրամանատար Եուսուֆ փաշան, որ բաւական քաջութիւն է ցոյց տուել արաբական ապստամբութիւնը ճնշելու գործում, մի քանի անգամ հրաժարական էր ներկայացրել սուլթանին, բայց վերջինս մինչև մերժել էր ընդունել նրա հրաժարականը։ Ներկայումս Եուսուֆ փաշան փախել է և ապաստանել Հօղէյդայի առաջ խարսխած իտալական «Ադրիա» շոգենաւը։ Չը նայած որ Հօղէյդայի իտալական հիւպատոսը, այդ քաղաքի կառավարչի խնդրանքի համաձայն, անձամբ գնացել է յիշեալ շոգենաւը՝ առաջարկելու Եուսուֆ փաշային յետ դառնալ քաղաք, բայց վերջինս վճռապէս մերժել է իր համաձայնութիւնը տալ եղած առաջարկին։

—

Բօստօնից հաղորդում են, թէ ամերիկական Միացեալ-Նահանգների կառավարութիւնը ձերբակալել է «Զայն Հայրենեաց» թերթի խմբագիր Նշան Եաղուպեանին և նոյն լրագրի վարչութեան միւս անդամներին։ Նոյնպէս ձերբակալված է Վերակազմեալ Հնչակեան կուսակցութեան Ամերիկայի ներկայացուցիչ Վաղարշակ Քէօլէեանը Նիւ-Եորկում և պիտի ուղարկվի Բօստօն։ Քէօլէեանը ձերբակալվելիս փորձել է կուլ տալ իր մօտ եղած մի քանի կարևոր փաստաթղթեր, բայց այդ բանը չէ աջողվել նրան։

—

Կաղզուան, 18 մարտի

Մարտի 17-ի երեկոյեան Կաղզուանի զաւառային ոստիկանատանը բացվեց մի հետաքրքրական գողութիւն, որի մանրամասնութիւնը հետևեալն է։

Մինչև 1905 թ. Կաղզուանի դատական մասի քրէական գործերին վերաբերեալ իրական-ապացոյցները (вещественное доказательство) պահվում էին դատական քննիչի գրասենեակում. իսկ 1905 թւից սկսած, համաձայն Երևանի շրջանային դատարանի որոշման, յիշեալ իրերը (միայն զէնքերը) տեղափոխվեցին՝ որպէս աւելի ապահով տեղ՝ վերոյիշեալ ոստիկանատունը և այնտեղ տեղաւորեցին մի արկղի մէջ, որը միշտ փակ և կնքված էր պահվում։

Այդ արկղը գտնվում էր ոչ թէ մի առանձին տեղ, որտեղ կարողանային ժուռք գործել կողմնակի մարդիկ, այլ ընդհակառակը դրված էր ոստիկանատան աչքի ընկնող տեղերից մէկում, որտեղ ցերեկները պարապում էին գրագիրները, իսկ գիշերները՝ օրապահ սարժանտներն էին հսկում։

Յիշեալ օրը ոստիկանատնից պէտք է ուղարկվէր այդ իրերից մի քանիսը Երևանի շրջանային դատարանի Կարսի բաժանմունքը, ուստի բաց են անում արկղը և տեսնում, որ արկղում ոչ մի զէնք չը կայ։

Գողացված է մօտաւորապէս 50—55 կոս

զանազան տեսակի դէպքեր՝ մեծ քանակութեամբ բերդանի հրացաններ, ատրճանակ և դաշոյն։ Կասկածն ընկնում է ոստիկանատան թուրք ծառայողների՝ ստրաժնիկների և գրագիրների վրա։ Չը նայելով որ գաւառապետը դիմել է խիստ միջոցների, բայց դժուար թէ արդիւնաւոր հետևանք ունենայ, քանի որ միևնոյն տեղում մի նման դէպք էլ կատարվեց 1897 թ., երբ գողացվեցին ոստիկանատան սեփական բերդանի հրացանները, և չը նայելով որ կասկածվում էր էլի մի թուրք գրագիր, բայց գողացված իրերը գտնելու համար ձեռք առնված միջոցներն այն ժամանակ էլ ցաց ցին ապարդիւն։

Զախօ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

II

Անցեալ տարվայ մայիսին Պարսկաստանում բռնկվեց շահի եղբօր՝ արքայորդի Մալաք-էդ-Դօվլէի ապստամբութիւնը, որը փորձեց գահընկեց անել Մահմէդ-Ալիին և տիրանալ պարսից թագաւորների գահին։ Կառավարական զօրքերից ջարդ կրելով, նա փախաւ Քիրմանշահ և իրան հալածողներից ազատվելու համար պատսպարվեց անգլիական դեսպանութեան շինութեան մէջ։ Մէջլիսում, որը արդէն մի տարի էր՝ որ կանոնի մէջ գործելու էր հրաւիրված, պահանջ յարուցվեց նրան յանձնելու մասին այն հիման վրա, որ արքայորդին ապստամբել էր օրինական շահի դէմ և այդ պատճառով նա պէտք է ենթարկվի ազգի դատաստանին։ Անգլիական դեսպանից պարլամենտը պատասխան պահանջեց, և այդ պատասխանը պէտք է ցոյց տար՝ թէ ինչպէս էր վերաբերվում Անգլիան դէպի ժողովրդական ներկայացուցչութիւնը, որին նա խոստանում էր բրիտանական թագի հզօր հովանաւորութեան ներքոյ առնել։ Բայց Անգլիան չը շեղվեց այն ուղիղ ճանապարհից, որով գնում էր արդէն։ Նրա թէհրանի ներկայացուցիչը, Լօնդոնից հրահանգներ ստանալով, ներկայանում է պարլամենտին և ներողութիւն արտայայտող խօսքերով խնդրում է ապստամբ արքայորդու կողմից անգլիական դեսպանութեան մէջ ապաւինելու փաստը թագուստ չը հաներ։ Նրա խօսքերով, արքայազնը պատըսպարան է միայն գտել, ինչպէս որ բրիտանական դրօշակի ներքոյ գտնում է ամեն մէկը, ով որ դրա կարիքը զգում է։ Բայց եթէ պարսկական պարլամենտը պահանջում է յանձնել նրան, իբրև պետական դաւաճանի, եթէ նա պատասխանատուութեան է ենթարկում արքայորդուն պարսկական օրէնքների առաջ, այն ժամանակ պարսից իշխանութիւնը կարող է կալանաւորել նրան անգլիական դեսպանութեան մէջ ևս։ Եւ կալանաւորված արքայորդին անմիջապէս յանձնվում է դատաստանական իշխանութեան ու տարվում է Թէհրան, ուր մինչև այժմ էլ պահվում է կալանաւորութեան մէջ։ Այդպիսով անգլիացիները մի անգամ ևս ցոյց տուին, որ Պարսկաստանի ժողովրդական ներկայացուցչութեան վրա նրանք նայում են իբրև մի հաստատութեան վրա, որը արդարև մարմնացնում է իր մէջ պետական իշխանութեան իրաւատիրութիւնը։ Եւ պարսիկները գոհ ու շնորհակալ մնացին։ Այդպէս չը վերաբերվեցին դէպի պարսից սահմանադրութիւնը ռուսաց դիպլոմատները։ Նրանք սերտ դաշինք հաստատեցին շահի հետ և արհամարհանքով էին նայում պարսկական պարլամենտի վրա, դեմոնստրատիվ կերպով ոչնչի տեղ դնելով նրան, որը պարզապէս արտայայտվում էր թէկուզ հէնց մի այսպիսի փաստով։ Մալաք-էդ-Դօվլէի անաջող ապստամբութիւնից քիչ ժամանակ յետոյ, մէջլիսի հրամանով, կալանաւորվում է մի հարուստ վաճառական՝ Մալէք-էդ-Թօջար անունով, վատահաբաւ և վատանուն մի մարդ, որը ընդարձակ գործեր էր վարում ռուսահպատակների հետ։ Նա մեղադրվում էր այն բանում՝ թէ իր ձեռնարկութիւնների ժամանակ վաճառում էր պարսից ժողովրդի շահերը։ Թէհրան տանելիս ճանապարհին նա փախչում է պահակների ձեռքից և ապաստանում է Զօրգենդի ռուսական դեսպանութեան ամարային բնակավայրում։ Չը նայելով մէջլիսի արած ամենաեռանդուն առաջարկութիւններին՝ նրան յանձնելու մասին, այնուամենայնիւ ռուսաց դեսպանութիւնը պատասխանում էր մերժումով։ Պարլամենտում, իսկ յետոյ, ի հարկէ, մամուլի մէջ ևս երևան եկաւ, որ անգլիացիները ներողութիւն խնդրելով յանձնել են շահի եղբօրը, իսկ ռուսները դատաստանական պատասխանատուութիւնից թագցնում, հովանաւորում են ամբողջ Պարսկաստանին յայտնի մի ագենտի։ Այնուհետև քիչ աղմուկ չը յարուցեց այդ միևնոյն Մալէք-էդ-Թօջարի վարմունքը՝ «Աստարա-Արդաբիլ» խճուղու կապալը ռուսահպատակ մի մարդու ձեռք տալը։ Դրա յանձնելը մինչև իսկ Մալէք-էդ-Թօջարի կատարած կեղծիքի արդիւնքն էր, որ պարզվել է պարսից արդարադատութեան մինիստրի միջոցով։ Արտաքին գործերի մինիստրութիւնը պահանջեց ռուսաց դեսպանութիւնից վերադարձնել կապալով վերցված խճուղին իր օրինական տէրերին, սակայն ռուսաց դիպլոմատները պաշտպան էին հանդիսանում կապալառուի իրաւունքներին։ Մինչդեռ այդ խնդիրը շօշափում էր ազգաբնակութեան աղքատ մասի ամենակենսական շահերը, որովհետև նա ստիպված է օգտվել այդ ճանապարհից փողով։ Իսկ երբ պարսից ազգայնականները սկսեցին ընթանալ մանուածապատ կածաններով, որպէսզի չափազանց մեծ գումարներ չը վճարեն ճանապարհի վարչութեանը, այն էլ ռուսահպատակ կապալառուին, այն ժամանակ ճանապարհի վարչութիւնը դիմեց ռուսաց պահպան կազակներին, որոնք և վերջ տուին այդ խոտորնակի քայլերին։ Եւ այս անգամ ևս պարլամենտի արած դիմումը ռուսաց դիպլոմատներին մնաց ձայն բարբառոյ յանապատի։

Սակայն դիպլոմատիական ամենամեծ սխալներից մէկը այն նօտան էր, որ անցեալ տարվայ ամառվայ վերջում ռուսաց դեսպան Հարդվիգը ուղարկեց պարսկական պարլամենտին։ Այդ գրութեան մէջ դեսպանը խիստ կերպով նախազգուշացնում էր, որ մէջլիսը անմիջապէս պէտք է վերջ դնէ պետական խռովութիւններին, որից տուժում են ռուսահպատակների շահերը, ապա թէ ոչ, հակառակ դէպքում, Պարսկաստանի հիւսիսային մասը կը գրաւվեն ռուսաց զօրքերի կողմից, որոնք ռուսական զէնքի ոյժով վերջ կը տան անկարգութիւններին։

Այդ նօտան աղմուկ բարձրացրեց մէջլիսում և ամենացասկոտ բողոքների պատճառ դարձաւ։ Դեսպանին պատասխան ուղարկվեց միևնոյն ոգով, որ Ռուսաստանը իրաւունք չունի միջամտելու երկրի ներքին գործերին, որ ռուսական ապստամբութեան ժամանակ պարսկահպատակները շատ բան կրեցին Կովկասում և ամբողջ Պարսկաստանում երկաթուղային գործադուլների շնորհիւ, բայց և այնպէս Պարսկաստանը մի ծպտուն էլ չը հանեց յիշեցնելու այդ մասին ռուսաց կառավարութեանը։ Պարսկական տիրապետութեան սահմանները զօրքեր մտցնելու սպառնալիքը վերջնականապէս տապալեց այն ջերմ զգացմունքների մնացորդները, որպիսին պարսիկները առաջներում տածում էին դէպի Ռուսաստանը։

Այդ ժամանակից սկսած պարսկական մամուլի մէջ (Մենեկես, Նեղայէ-վաթան և այլն) սկսեցին թշնամական ձայներ հնչել ռուսների վերաբերմամբ։ Իսկ որքան աւելի ժամանակ էր անցնում, այնքան աւելի էին կուտակվում անախորժութեան և վիրաւորանքի զգացմունքները։ Երբ անցեալ տարի դեկտեմբերին շահը, անսպասելի կերպով կալանաւորելով մինիստրների ազատամիտ կօմիտէը, փորձ արեց վերադառնալ վաղեմի՝ մինչև սահմանադրութիւնը եղած կարգերին, Պարսկաստանի միահամուռ ձայնը պատրաստ էր շահի դրդիչը անուանել ոչ այլ ոքի, բայց եթէ ռուսներին։ Լրագրները ասում էին, որ ռուսները ոչ միայն բարոյական աջակցութիւն են խոստանում շահին, այլև զօրքերով ներս կը խուժեն մեր երկիրը և կօգնեն դրանով խլելու սահմանադրութիւնը։

Այժմ ռուսական գործելակերպից դժգոհ ձայները արդէն սկսել են թշնամաբար արտայայտվել։ Թէհրանի ազգայնական անջուլմանների միտինգներում ճառախօսները իրանց ատելութիւնն էին արտայայտում Ռուսաստանին, որպէս պարսկական բէակցիայի յենարանի, իսկ այդ բէակցիան Պարսկաստանին անհամար չարիքներ ու թշուառութիւններ է խոստանում։ Պարսկաստանում ներկայումս ռուսների կուսակից են մնացել բէակցիոներները միայն։ Ռուսաց գործերը օր ըստ օրէ նկատելի կերպով էին ընկնում, իսկ անգլիացիները յաղթութիւն էին տանում և դիպլոմատիական հաղագիւտ ճարպիկութեամբ աշխատում էին օգտվել իւրաքանչիւր դիպուածից, որը կարող էր գրաւել երկրի համակրութիւնը իրանց կողմը և դրանով էլ աւելի ևս զօրեղ կերպով ընդդծել ռուսաց սխալները։ Երբ շահը կալանաւորեց մինիստրներին, անգլիական դեսպանը պահանջեց ազատել մինիստր-նախագահ Նասր-իւլ-Միւլքին լոկ այն պատճառաբանութեամբ, որ նա «անգլիական բարձրագոյն շքանշաններից մէկի կաւալերն է»։ Այդ դեռ քիչ է. դեսպանը յայտնեց պարլամենտին, որ անգլիական դեսպանութեան դռները առաջվայ նման բաց են պատգամաւորների համար և որ այնտեղ նրանք համարձակօրէն կարող են յուսալ իրանց կեանքի ապահովութեան մասին։ Անգլիացիները ապա կարողացան ազատել տալ Նասր-իւլ-Միւլքին և իրանց բոլոր ջանքերը լարեցին նպաստելու սահմանադրական կուսակցութեան յաղթանակին։

Իսկ ինչ էին անում այդ ժամանակ ռուս դիպլոմատները։ Նրանք լռել էին և նրանց ձայները կատարվող անցքերի մէջ բոլորովին չէին էլ լսվում։ Եւ ռուս հասարակութեան համար անհասկանալի այդ լռութիւնը չափազանց հասկանալի էր սակայն ամեն մի պարսիկի համար։ Այն ժամանակ միայն, երբ յաղթութիւնը ակներև կերպով արդէն թեքվում էր սահմանադրականների կողմը, ռուս հասարակութեան ականջներին սկսեցին երբեմն լսելի լինել հատ ու կտոր և շատ համառօտ հեռագիրներ՝ թէ ռուսաց ներկայացուցիչը նոյնպէս (այն էլ երկրորդական տեղում) սկսել է հետաքրքրվել պարլամենտի վիճակով, աջակցել նրան։

Այդպիսով այնտեղ, ուր դեռ ևս ոչ շատ ժամանակ առաջ Ռուսաստանի ձայնը ամենահզօր էր, ազատագրական շարժման յորձանքը խոր փոփոխութիւններ է կատարել։ Նա վեր բարձրացրեց Անգլիայի վարկը և խախտեց Ռուսաստանի հին վարկը։ Դրա ամենաբնորոշ ապացոյցը կարող է լինել Պարսկաստանում ռուսահպատակների վրա օրէ-ցօր յաճախակի կրկնվող յարձակումները, որոնք իրերի դրութեան ընդհանուր ֆօնի վրա բաւականին նշանակալից ցուցանակ են հանդիսանում։ Ռուսների բնակարանները գնալով շուտ-շուտ են կողոպտվում և կամ ոչնչանում են հրդեհումից, առաջացող բոցերի մէջ։ Ներժուծվող ռուսական ապրանքները ռուսաց խճուղու վրա (Զուլֆա, Արդաբիլ մինչև Թաւրիզ) օրէ-ցօր յաճախակի են ենթարկվում զինված կողոպտուիների։ հիւպատոսական պօստը արդէն մի քանի անգամ կողոպտիչների ձեռքն է ընկել։ ռուսական ապրանքները Պարսկաստանում ենթարկվել են բոյկոտի պարսիկ ազգայնականների կողմից (շաքարը, նաւթը, կտաւը և այլն)։ Բայց ամենանշանակալից փաստը յաճախակի արձանագրվող բազմաթիւ «պատահականութիւններից»՝ մօտ ժամանակներս Թաւրիզի ռուսաց դեսպանի կեանքի դէմ կատարված փաստն է, որը արդէն ոչ մի կերպ չէ կարելի անձնական հաշիւների շարքում ստորադասել, այլ պէտք է ուղղակի շաղկապել ազգաբնակութեան խոշոր մասսաների վերաբերմունքի հետ, որ առաջ է եկել Պարսկաստանի մէջ ռուսների բռնած գործելակերպի պատճառով։

Այդ մահափորձը, որ չաջողվեց բաղդաւոր պատահականութեան շնորհիւ միայն, պէտք է ստիպէ շատերին լուրջ կերպով մտածելու։ Առաջներում պարսիկները օգնում էին մեզ որպէս ռուսական սահմանագծի մօտականերում ուսումնասիրութիւններ կատարող անգլիական լրտեսներին, իսկ այժմ նրանք մոռացել են այդ և, նայելով անգլիացիների վրա իբրև իրանց բարեկամների, պատրաստ են ընդմիշտ խզելու իրանց բարեկամական սերտ կապերը, որ դեռ մօտիկ ժամանակներս միացնում էր Պարսկաստանի շահերը Ռուսաստանի անմիջական օգուտների հետ։

(«Բ. Բ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՒՌՔԸ

(Լեւ Տօլստոյ)

I

Ինչպէս յայտնի է, այս տարի, օգոստոսի 28-ին, ռուս դրական աշխարհի ձեռներէցութեամբ, երկու կիսաշնդերի կրթված մարդկութիւնը տօնելու է Լեւ Տօլստոյի ծննդեան 80-ամեակը։

«Ռուս երկրի մեծ գրողի—ինչպէս առնուանել է նրան իր ժամանակից յայտնի գրող Ի. Տուրգենեվը—համաշխարհային լինելիք այս տօնը, իսկապէս, անսովոր մի յօբելեան է։ Բառի բուն նշանակութեամբ, դա ոչ թէ յօբելեան է, այլ ամենաջերմ համակրանքների մի բուռն արտայայտութիւնն է, ամենասուրբ մտորումների զեղումը, ամենանազուսպ կրքերի բռնկումը։

Ռուս մեծ աշխարհը կանգնած է՝ իր ամենամեծ զաւակը ձեռքից թողնելու, յաւիտենապէս կորցնելու անխուսափելի վտանգի նախօրեակին։

Նա չէ ուզում հաւատալ, որ իր երկրի հրաշակերտը, իր ցեղի ինքնատիպ ուսուցիչը, իր սերունդների օրիգինալ դաստիարակը, իր հոգեկան աշխարհի մեծ յեղափոխիչը, իր հայեացքներին նոր ուղղութիւն տուողը, Եասնայա Պօլիանան ողջ երկրագնդի ուխտատեղին շինողը, մի խօսքով՝ իր Սօկրատը, իր Կանտը, սովորական մարդու պէս—մի օր կարող է ծածկվել իր մարմնաւոր աչքերից...

Բայց անողորմ իրողութիւնը մերկապարանոց կանգնած է իր առջևը։

Նրա պարծանքը, նրա հպարտութիւնը համարվող այդ մեծ լուսատուն շուտով մայր է մտնելու*), և թողնելու է իր ետևից իր յաղթ ֆիգուրի թոյլ սիլուէտը միայն։

Ու հիացած ռուսութիւնը, մի վերջին անգամ էլ ուզում է գգուել նրան՝ մանկական գուրգուրանքով, մի անգամ էլ փառաւորված տեսնել նրան, մի անգամ էլ կանգնեցնել նրան՝ աստուածների վայել բարձր պատուանդանի վրա—ի տես նոյնիսկ Եւրոպայի ու Ամերիկայի։

II

Ու շատ հասկանալի է։

Տօլստոյները սովորական երևոյթներ չեն մեր կեանքում։ Դրանք բացառութիւններ են։ Դարերն ու հազարամեակներն են միայն ծնում այդպիսի խիզախ ընոյթներ, այդպիսի տիտան մտքեր։

Տօլստոյն գեղարուեստագէտ է, բարոյախօս ու փիլիսոփայ։

Նրա պէս, նրանից էլ լաւ գեղարուեստագէտներ Ռուսաստանը գուցէ շատ ունենայ, քանի որ ինքը Տօլստոյն արդէն բաւական գովասանքով է խօսում Ա. Չեխովի ու Լ. Անդրէեվի մասին...

Բայց նրա պէս բարոյախօս ու փիլիսոփայ՝ ռուս երկիրը, հաւանական է, որ երեւակայել անգամ դժուարանայ։

Ինչու եմ ասում նրա պէս։ Որովհետև նա չէ քարոզել որևէ սկզբունք, որին առաջ ինքը չը լինի հետևած գործնականութեան մէջ։

Նա սեփականութիւն չէ ճանաչում։ Ու արդէն յայտնի է, որ նա միանգամայն հրաժարվեց թէ իր հարուստ կալուածներից ու թէ գրական սեփականութիւններից։

Նա քարոզել է՝ կերակրեղէնի մէջ անպայման ժուժկալութիւն։ Ու ինքն առաջինն է հրաժարվել մսեղէն ուտելիքից, դրանով հիմք դնելով խոտաճարակութեան, որ հետզհետէ մեծ նուաճումներ է անում Մօսկվայի բոլոր խաւերի մէջ։

Նա պահանջում է՝ չքաւորին օգնել ոչ թէ փողով, այլ գործով—ֆիզիքական աշխատանքով։ Ու, դէպք եղած ժամանակ,—մի կողմ թողնելով իր կոմսական տիտղոսի հմայքը,—գիւղական մի այրի կնոջ համար, իր ձեռքով, պատի վառարան շինեց, կաւաթախ լինելով. միւսի արտը հնձեց՝ իր աղջկանց հետ, վեց ժամ շարունակ քրտինքի մէջ խաշվելով. ժայրաքաղաքում էլ, իր դրացու հրկիզված տանն օգնութիւն հասցնելու համար, ազատ ձի չը գտնելով, սայլի մէջ լծվեց և, ուժասպառ լինելու չափ, Մօսկվա գետից ջուր կրեց մինչև երեկոյ։

III

Տօլստոյի՝ կէս դարից աւելի տեղ գրական փառաւոր գործունէութիւնը նրա հանճարի անվիճելի ապացոյցն է։ Ու զարմանալի չէ, որ նա համարեա առաջին տեղն է բռնում ժամանակակից համաշխարհային գրականութեան մէջ, իբրև խօսքի արուեստագէտներից ամենամեծը։

Իր խօսքի գեղարուեստական նմուշներով նա հիացրել ու գերել է գրական արուեստի տարերկրեայ գնահատողներից ամենախստապահանջներին իսկ։ Ռուս գրականութեան այս հերոսին Նրանք Շեքսպիրից պակաս չեն գնահատում։ Իսկ անկեղծութեան, մտքի խորութեան, այլ և մարդկի ու բընութեան տեսարաններ նկարագրելու ոյժի և պարզութեան կողմից՝ նա իրան հաւասարը չունի համաշխարհային գրականութեան ողջ պատմութեան մէջ։

Հասկանալի է, սակայն, որ Ռուսաստանը, մանաւանդ Անգլիան ու Ամերիկան, Եւրոպան էլ հետները, իրանց սրտին շատ մօտ են առնելու Տօլստոյի 80-ամեակը, գլխաւորապէս նրա մշտատանջ որոնումների եռեւից ընկած լինելու պատճառով, որոնք, նրա հոգեկան անդուլ կռիւների ու անձնաքննութիւնների շնորհիւ, վերջապէս, պսակեցին նրա մտաւոր կիսագունդը անմահութեան դափնիներով։

—

Նրա գրուածքները խիստ շատ են և թարգմանված են եւրոպական ու ասիական բոլոր լեզուներով։ Նրանք տարածվում են տասնեակ հազարներով, մի քանիսը՝ նոյն իսկ հարիւր հազարներով։

Հայերէն թարգմանված են՝ «Յարութիւն», «Մանկութիւն ու պատանեկութիւն», «Կրէյցերի Սօնատը», «Կրէյցերի Սօնատի վերջաբանը», «Կանանց», «Մեծ մեղք», «Երեք մահ», «Շատ հող է հարկաւոր մարդուն», «Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը», բայց դատաստանը շուտ չէ անում», «Սէր», «Աղօթք», «Սեռային յարաբերութիւն» և այլն։

Զանազան լեզուներով նրա մասին գրել են ընկերաբաններ, մարդաբաններ, փիլիսոփաներ ու աստուածաբաններ՝ մօտ 200 գիրք։

Էմմ. Ք. Նապարեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Նիստ մարտի 20-ի

Նիստը բացվում է ժամը 11 և 14 րոպէին։ Նախագահում է Խոմեակովը։

Հերթին դրված է ֆինանսական մասնաժողովի զեկուցումը այն օրինագծի մասին, որով առաջարկվում է փոփոխութեան ենթարկել 1904 թ. մայիսի 10-ին բարձրագոյնս հաստատված Պետական Խորհրդի որոշումը, որ վերաբերում է գիւղացիական նադել հողերից առ 1-ն յունվարի 1904 թ. դէմստվային տուրքերը զէմստվոներին հատուցանելու ժամանակամիջոցին։ Զեկուցանողն է աշխատասէր Մինաղինօն։

Մտքերի հակիրճ փոխանակութիւնից յետոյ, օրինագիծը ձայների մեծամասնութեամբ մերժվում է։

Մի ժամ ընդմիջումից յետոյ քննութեան է առաջարկվում Սիբիրի նահանգներին վերաբերեալ 1908—1910 թ.-ների համար պետական օբրօչնի կոչված հարկը որոշող օրինագիծը։ Զեկուցանողն է Պոլովցեվ։

Մտքերի փոխանակութիւնից յետոյ քննարկութեամբ ընդունվում է օրինագիծը ֆինանսական մասնաժողովի առաջարկած խմբագրութեամբ և թւանշաններով։ Օրինագիծը համարվում է՝ հերթական և յանձնվում է խմբագրական մասնաժողովին։

Այնուհետև առանց վիճաբանութիւնների Դուման ընդունում է. ամեն տարի պետական գանձարանից 1000 ռուբլի բաց թողնել Կազանի ուսուցչական սեմինարիայի մտաւորական պէտքերի համար, և 2400 ռուբլի ամեն տարի՝ Մօսկվայի ուսուցչական ինստիտուտի մտաւորական կարիքների համար։

Առաջարկվում է քննել Դումայի 94 անդամների առաջարկագիրը—սինոդի նախագծերի առաջարկագիրը—սինոդի նախագիծը հաստատված Պետական Խորհրդի որոշումը, որ վերաբերում է գիւղացիական նադել հողերից առ 1-ն յունվարի 1904 թ. դէմստվային տուրքերը զէմստվոներին հատուցանելու ժամանակամիջոցին։ Զեկուցանողն է աշխատասէր Մինաղինօն։

Մտքերի հակիրճ փոխանակութիւնից յետոյ, օրինագիծը ձայների մեծամասնութեամբ մերժվում է։

Մի ժամ ընդմիջումից յետոյ քննութեան է առաջարկվում Սիբիրի նահանգներին վերաբերեալ 1908—1910 թ.-ների համար պետական օբրօչնի կոչված հարկը որոշող օրինագիծը։ Զեկուցանողն է Պոլովցեվ։

Մտքերի փոխանակութիւնից յետոյ քննարկութեամբ ընդունվում է օրինագիծը ֆինանսական մասնաժողովի առաջարկած խմբագրութեամբ և թւանշաններով։ Օրինագիծը համարվում է՝ հերթական և յանձնվում է խմբագրական մասնաժողովին։

Այնուհետև առանց վիճաբանութիւնների Դուման ընդունում է. ամեն տարի պետական գանձարանից 1000 ռուբլի բաց թողնել Կազանի ուսուցչական սեմինարիայի մտաւորական պէտքերի համար, և 2400 ռուբլի ամեն տարի՝ Մօսկվայի ուսուցչական ինստիտուտի մտաւորական կարիքների համար։

Առաջարկվում է քննել Դումայի 94 անդամների առաջարկագիրը—սինոդի նախագծերի առաջարկագիրը—սինոդի նախագիծը հաստատված Պետական Խորհրդի որոշումը, որ վերաբերում է գիւղացիական նադել հողերից առ 1-ն յունվարի 1904 թ. դէմստվային տուրքերը զէմստվոներին հատուցանելու ժամանակամիջոցին։ Զեկուցանողն է աշխատասէր Մինաղինօն։

Մտքերի հակիրճ փոխանակութիւնից յետոյ, օրինագիծը ձայների մեծամասնութեամբ մերժվում է։

Մի ժամ ընդմիջումից յետոյ քննութեան է առաջարկվում Սիբիրի նահանգներին վերաբերեալ 1908—1910 թ.-ների համար պետական օբրօչնի կոչված հարկը որոշող օրինագիծը։ Զեկուցանողն է Պոլովցեվ։

Մտքերի փոխանակութիւնից յետոյ քննարկութեամբ ընդունվում է օրինագիծը ֆինանսական մասնաժողովի առաջարկած խմբագրութեամբ և թւանշաններով։ Օրինագիծը համարվում է՝ հերթական և յանձնվում է խմբագրական մասնաժողովին։

Դրանց վիճաբանութիւններից յետոյ քուէարկութեամբ առաջարկագիրը յանձնվում է ժողովրդական կրթութեան հարցով զբաղվող մասնաժողովին։

Ապա նախագահը յայտարարում է, որ քննվելու է Ամուրեան երկաթուղագծի նախագիծը։ Սակայն գեկուցանող Մարկով I խնդրում է քննութիւնը յետաձգել, որովհետև մի փոքր առաջ տեղի ունեցած աղմուկից իրան վատ է զգում և անկարող է զեկուցանել...

Նիստը փակվում է երեկ. ժամը 5 և 40 րոպէին։

Հետևեալը կը կայանայ շաբաթ, մարտի 22-ին, իսկ երկուշաբթի օրը՝ յատկապէս Ամուրեան երկաթուղագծի նախագիծը քննելու համար։

Արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւ վերաբերութեամբ բիւջէտային մասնաժողովի առաջարկած բանաձևը. «Անհրաժեշտ ընդունելով, որ արտաքին գործերի մինիստրութիւնը վերաբերեալ ձեռնարկէ ինչպէս կենտրոնական կառավարութեան, այնպէս և արտասահմանեան հաստատութիւնների գործող շտատները, որով օտարազգի պետութիւնների ներկայացուցչութիւնը պէտք է կազմակերպվի Ռուսաստանի՝ իբրև մեծ պետութեան շահերի և արժանապատուութեան համաձայն, իսկ բարձր դիպլոմատիական ներկայացուցիչների ծախքերը պէտք է բաժանված լինեն ներկայացուցչութեան վրա ծախսվող գումարներից, որ 1909 թ. նախահաշիվով ծախքերը կատարվեն մեծ զգուշութեամբ, համաձայն իրական կարիքների, որ շտատների վերաքննութեան ժամանակ ուշադրութիւն դարձվի այն հանգամանքի վրա, որ նոր հաստատվող շտատի պաշտօնեաների պահպանութեան ծախքերը կատարվեն այն գումարներից, որ ներկայումս յատկացվում են դեպարտամենտների վերատեսուչներին՝ դիւանատների միջոցները շատացնելու համար,—Դուման անցնում է արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւի առանձին համարների քննութեան»։

ԳՐԱԿԱՆԱԳԷՏՆԵՐԻ ԺՈՂՈՎԻՆ

—

Երևան, 3 մարտի

Այն գործը և ձեռնարկութիւնը, որ այժմ սկսել էք յարգելի գրականագէտներդ,—ապահով դարձնելու «գրչի ազատութիւնը» ինկվիզիցիայով բռնադատված մեր տխուր միջավայրի մէջ,—անասելի չափով քաջութիւն և խրախուսանք է ազդում մեզ՝ գաւառական անկիւններում ընկած գրչի մարդկանց և մամուլի բոլոր աշխատակիցներս վրա։ Չը կայ ոչ մի կենսագրական տեղեկութիւն հայկական աւելի բիրտ պայմաններով շրջապատված դժբաղդ միջավայրի թղթակիցների և գրչի մարդկանց կրած ֆիզիքական հալածանքների մասին, դեռ մի կողմը թողնելով նիւթականը. բայց և ոչ ոքի անյայտ չէ այդ դառն և տխուր կեանքի աւելի քան մարտիրոսական իրողութիւնը։ Վազուց այդ ինկվիզիցիան, կոպիտ բռունցքն ու «խէնալի ծայրը» գոյութիւն ունեն մեր հասարակական կեանքի մէջ դէպի գրչի ազատ հրապարակախօսութիւնը, որոնք աւելի մեծ չափով կաշկանդել ու զսպել են գրչի ազատ թռիչքը իրանց բռունցքով, քան բիւրօկրատական նախկին ցենզուրան։ Սակայն այդ բռունցքի և ինկվիզիցիայի կաշկանդիչ ներկայութիւնը խիստ թանգ վճարումով, իր արեան գնով միայն զգալ տուեց նոյն բռնութեան զոհը, գրչի մեծ մշակ և մեծ հրապարակախօս Արփիարը։ Նրա տակաւին տաք արեան և թարմ շիրմի առաջ միայն սթափվում է գրչի մարդկանց ինքնամոռացութիւնը և խորը խոցի մորմոքների տակ առաջ գալիս կուեալու այդ երկրորդ աւելի քան դաժան թշնամու դէմ։ Մեծ է և նշանակալից այդ ֆունկցիան, որին ցանկալի է տալ այն զարկն ու օրէնսդրական նշանակութիւնը, որ կարող լինի ապահովել բոլոր գրչի մշակների կեանքն ու պատիւը մինչև իսկ գաւառական բոլոր ամենախուլ անկիւններում։ Հեռաւոր՝ գրչի թէկուզ ամենափոքրիկ ծառան, մշակը իր բարձրում մի մշտական մարմին պիտի ունենայ՝ այդպիսի դէպքում ուղարկելու և յայտնելու իր բողոքը։ Նրանց պաշտպանութիւնը չը պիտի ի հարկէ բացառութիւն կազմէ այն բոլոր դէպքերում, որտեղ բռնադատված է գրիչն ու գրական մարդը։ Դա մեզ միջոց կը տայ աւելի վստահ կերպով կատարելու մեր պարտքը՝ կռիւը այն բոլոր ախտերի, ոյժերի, բռնութիւնների և հասարակական խոչընդոտների դէմ, որոնք մեր առաջադիմութեան և բարօր կեանքի արգելարգիլներն են։

Մուշեղ Բագրատունի

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գանձակ, 19 մարտի

Երկու օր առաջ երկաթուղու ապրանքային կայարանում մի զողութիւն բացվեց, որի պատճառով բանտարկվեցից կայարանի կըշռող Զաչենկօն, նրա ընկերակից Կալանդարաշվիլին և Եղիշէ անունով մի ատորին ծառայող։ Դէպքը պատահել է այսպէս։

Եղբայր Ֆօրերի կօմխիօներ Աւալիանի մի քանի արկղ թանգագին կոնեակներ է ուղարկելիս լինում։ յանկարծ նկատում է 60 շիշ պարունակող մի արկղը չքացած։

*) Երկու օր առաջ Տօլստոյից խփված հեռագիրն արդէն ապացուցեց, որ հոչակաւոր ծերունին, ինֆուլենցիայից բռնված՝ ուշաթափվեց և, ուշքի գալով, իր մերձաւորներին չէր կարողանում ճանաչել։

Սկսում է այս ու այն կողմը խուզարկել. կայարանի ապրանքների տակ գտնում է մի քանի շիշ թագցրած, իսկ դատարկ արկղը մի այլ տեղ ձգած. Աւալիանի անմիջապես յայտնում է կայարանի ժանդարմին և վերջինս հետ դիմում է կօնեակներ թագցրած տեղը, բայց նկատում են կօնեակները և արկղը չքացած.

Սկսվում է ամենախիստ խուզարկութիւն. բայց առանց հետևանքի է անցնում: Երբ սակում են խուզարկել այդ օրվայ ուրիշ տեղ ճանապարհվող կնքված վագոնները, նրանցից մէկում գտնվում են գողացված կօնեակները և կոտրատված կօնեակի արկղը:

Գողութեան կասկածը ընկնում է կշռող Զաչենկոյի վրա, որի համար խուզարկում են նրա բնակարանը, ուր գտնում են նոյն կօնեակից 5 հատ լիքը շիշեր և 17 դատարկ շիշեր, ի հարկէ, ոչ այս անգամի գողացածից:

Կշռող Զաչենկօն յանձն է առնում իր յանցանքը և տալիս է իր մեղակից Կալանդարաշվիլին, Եղիշէի և մի թուրքի անունները. վերջինս փախած է, մնացածները բանտարկված են:

Ի դէպ, պէտք է յիշենք, որ վերջին տարիներս, հնորհիւ զանազան կասկածաւոր կշռողների և բեռնակրապետների, ինչպէս և հնորհիւ երկաթուղու վարչութեան անտարբեր և անհոգ վերաբերմունքի, աւելի ճարպիկ և խոշոր գողութիւններ են կատարվում թէ կայարաններում և թէ վագոններում:

Օքչնակ, վերջին ժամանակներս Ռուսաստանի մի քանի քաղաքներից տեղեկութիւններ են ստացվել, որ այնտեղ ստացվող գինիների փոխարէն ջուր է ստացվում կամ Ջրահամ գինի:

Վերջին ժամանակներում պարզվել է, որ գողութիւնը կատարվում է կայարաններում, այն էլ շատ ճարպիկութեամբ. Զաչենկօյի նման ծառայողները գինու տակառի երկաթէ կապերը յետ կամ առաջ են քաշում ու ռետինէ խողովակներով տակառից գինին դուրս հանում և փոխարէնը ջրով լցնում, ապա ծակերը նորից խցանով ամրացնում:

Այդ գողութեան առաջն առնելու միակ միջոցը կրկնակի տակառներով ուղարկելն է. այսպէս՝ գինու տակառը պէտք է դնել մի այլ տակառի մէջ, որը բաւական ծախսեր է պահանջում:

Սպան

—

Սամարղանդ, 14 մարտի

Այստեղ՝ Սամարղանդում, որ կենտրօն կարելի է համարել Թիւրքեստանի, հայերս ունենք մի բարեգործական ընկերութիւն, հաստատված և ընդարձակ կանոնադրութեամբ, սակայն ահա երկրորդ տարին է լրանում նրա գոյութիւնը և դեռ բուն նշանակութեամբ ոչինչ չէ արել:

Ցաւում ենք, ի հարկէ, այդօրինակ դանդաղկոտութեան համար, բայց և չենք կարող չը նկատել մեր ընկերութեան վարչութեան պ. պ. անդամներին, թէ ինչու պաշտօնից չեն հրաժարվում, որ ասպարէզ մտնեն նորերը. գուցէ նրանք հաստատասխան լինեն իրանց պարտականութեանը:

Ցանկալի՞ էր, որ մեր ընկերութեան բոլոր անդամները խրախուսվեին Կովկասեան հայոց բարեգործական ընկերութեան բացումով և գտնէ նրա հետ սգեորված գործէին:

Անդամ

—

Ախալքալաք, 10 մարտի

Բարեկենդանի առաջին շաբթին տեղս այցելեց Թիֆլիսի նահանգապետը, որպէսզի տեղումը ծանօթանայ ազգաբնակութեան տնտեսական վիճակի հետ և կազմակերպէ մի նպաստամատոյց յանձնաժողով, որ բաւարարութիւն տայ պետական գանձարանից բաց թողնված նպաստով անցեալ տարվայ Կարկտից և ցրտից փնասված գիւղերին:

Յանձնաժողովի մէջ բացի պաշտօնական անձերից կան նաև քաղաքային աւագը, նրա օգնականը, Վ. Շահպարոնեանը և Թ. Մաղաքեանը: Արդէն յանձնաժողովը սկսել է իր գործունէութիւնը: Հաշտարար դատաւորները գիւղերն են շրջում և կազմում կարօտեալ ընտանիքների ցուցակը: Յանձնաժողովը միջնորդութիւն է յարուցել նահանգապետի առաջ, որ Ռուսաստանից շուտով բերել տայ 20 վագօն ցորեն և գարի, իսկ ցանքսի համար առնելու են տեղական ցորենը և գարին:

Էն-Էն

—

Ցարիցին, 2 մարտի

Մարտի 2-ին տեղիս նորակառոյց ս. Գրիգոր եկեղեցում պատարագից յետոյ կայացաւ եկեղեցական նոր երէցփոխական ընտրութիւնը 62 երկսեռ անձանց ներկայութեամբ: Ժողովին նախագահում էր ծխատէր Մկրտիչ ք. Դասպարեանը: Առաջարկված թեկնածուներից ձայների առաւելութեամբ քուէարկվեցին Պօղոս Քիստեան և Մինաս Միսկարեան, որ և ընտրվեց 35 ձայնով ընդդէմ 27-ի: Այս այն մարդն է, որի ջանքերով շինվել է տեղիս եկեղեցին, և որը ջանքեր չէ խնայում, որպէսզի Ցարիցինի հայերը ուսումնարան էլ ունենան:

Յովսէփ Դաւթեան

—

Տանձոտ (Արդուբիլի շրջ.), 10 մարտի

6—7 տարի է լինում, որ մենք զրկվել ենք մեր նախկին անշուք ուսումնարանից, և 70—80 երկսեռ աշակերտները սեղմվում են մի դասարանի մէջ: Պարզ է, թէ ինչ կը լինի այդպիսի նեղ խուցերում ուսուցչի և աշակերտի վիճակը: Ահա այդպէս ճաշակելով այդ դառնութիւնը, ժողովուրդը մի կողմ ձգած ամեն հոգս, մոռացած օրվայ հացի խնդիրը՝ եռանդուն կերպով նուիրված է մի վայելուչ դպրոցի շինութեան: Յանկանում ենք աջողութիւն...

Յատկապէս մի մեծ դահլիճում շինված է և մի փոքրիկ բեմ, ուստի տեղիս սիրողների ջերմ աշխատանքով 3 տարվայ ընթացքում տրվել են մի շարք ներկայացումներ: Ամեն ներկայացման թատրոնադահլիճը ծայրէ ի ծայր լիքն է լինում: Ուրախալին այն է որ տեղիս տիկիններն ու օրիորդները առանց ուշադրութիւն դարձնելու բարբասանքներին՝ սիրայօժարութեամբ են ընդունում ամեն մի դեր և համարձակ երևում են բեմ՝ կատարելու:

Այս տարի լրանում է մեր գիւղում հիմնված գրադարան-ընթերցարանի տասնամեակը: Այդ առիթով մեր թատերասէրները պատրաստվում են Զատկին երկու ներկայացում տալու յօգուտ գրադարանի: Մեզանում բոլոր զուարճութիւնների ժամանակ խմիչքեղէնների տեղ փող է հանգանակվում յօգուտ գրադարանի, և այսօր գրադարանը ստանում է գրեթէ բոլոր լրագիրներից: Խնդրում ենք բարեսիրտ անձանց, բարեգործական հաստատութիւններին և հրատարակիչներին հասցնել իրանց նուէրները մեր փայփայած գրադարանին:

Վարդան Մազմանեան

—

Երևան, 17 մարտի

Խոստացել էի «Մշակի» ընթերցողներին յայտնել «փոխադարձ վարկի» ընկերութեան ընդհանուր ժողովի մասին, որը քննելու էր նրա վարչութեան բարձրացրած խնդիրը՝ «մանր վարկի» մէջ գտնված անդամներին հեռացնելու վերաբերութեամբ: Զը նայելով, որ վարչութեան նախագահը արգելել էր կողմակի մարդկանց մուտք գործելու ժողովին, որի համար էլ մուտքի մօտ կանգնեցրել էր առանձին պահապան, այնուամենայնիւ ինձ աջողվեց մի կերպ ներս սպրդել: Ժողովը կայացաւ ամսիս 2-ին քաղաքային ժողովարանի թատրօնական դահլիճում, մասնակցութեամբ մօտ 250 անդամի, մի չը տեսնված թիւ այսպիսի ժողովներում:

Ընդհանուր ժողովի նախագահ պ. Կ. Կամսարականը զեկուցեց ժողովին բոլոր գրաւոր զեկուցմունները այդ հարցի վերաբերութեամբ, որոնց թւում և այն նամակը, որով վարչութիւնը դիմել էր մինիստրութեանը բացատրութիւն խնդրելու, որ և առիթ եղաւ այս ամբողջ խայտառակութեան հրապարակ գալուն: Դա խնդիր չէր, այլ մի աղերսանք, որի մէջ այնպէս էր ներկայացված խնդիրը, որ իբր երկու վարկային ընկերութիւններն էլ կը վտանգվեն, եթէ միևնոյն մարդը երկուսի մէջ էլ անդամ լինի:

Ժողովը խիստ աղմկալից էր: Եւ ամենից հետաքրքրականը այն էր, որ փոխատու վարկի վարչութիւնը և մանաւանդ նրա նախագահ պ. Վ. Եղիազարեանը կատարեալ լռութիւն էին պահպանել, քաջութիւն չունենալով իրանց կաբինետային հրամանները հրապարակով պաշտպանելու: Երկար վիճաբանութիւններից յետոյ, քուէարկութեան դրվեց վարչութեան յարուցած հարցը, այն է՝ կարող է արդեօք միևնոյն մարդը անդամ լինել թէ փոխատու վարկի և թէ մանր կրեդիտի մէջ:

Խիստ զուարճալի էր այդ քուէարկութեան հետևանքը. յօգուտ այդ հարցի ոտքի կանգնեց միմիայն մէկը և այդ մէկն էր վարչութեան անդամ գանձապահ պ. Ա. Մինասեանը: Իսկ հարցի իսկական հեղինակը՝ վարչութեան նախագահ պ. Վ. Եղիազարեանցը մնաց իր տեղում նստած:

Այսպիսով այս հարցը իր հիմնական կէտում վճռվեց հակառակ վարչութեան:

Այս բոլորից յետոյ վարչութեան նախագահը վստահութիւն ունեցաւ դեռ պահանջելու, որ այս որոշումները դարձեալ ուղարկվեն մինիստրութեանը բացատրութեան համար: Սա արդէն սաստիկ զրգռեց ժողովականներին, որոնք ոտքի կանգնելով չուզեցին նոյն իսկ այդ առաջարկութիւնը լսել և միաձայն մերժեցին նրան: Վերջում նախագահը առաջարկեց քննել այն հարցը, թէ վարչութիւնը մեղաւոր է այդ հարցում թէ ոչ: Այդտեղ պ. Նազարէթեանցը, որ զարթեցրել էր այդ հարցը, յետ վերցրեց իր առաջարկութիւնը ասելով, «որ եղածն էլ բաւական է»: Այսպիսով լուծվեց հասարակ դասակարգի և ազքատ ժողովրդի վերաբերութեամբ ձեռք առնված մի դատապարտելի միջոց, որով, եթէ միայն նա աջողվեր, վերջնական քայքայումն առաջ կը բերվեր այդ խեղճ դասակարգի տնտեսական դրութեան մէջ:

Այս դասը, որ հասարակութիւնը տուեց այդ ձեռնարկութիւնների հեղինակներին, որոնք մինչև այժմ համարվում էին նոյն հասարակութեան կուռքերը, պէտք է որ խրատական լինի ապագայի համար:

Դ. Աղազարեան

—

Բարվանսարա, 9 մարտի

Պէտք չէր մարգարէ լինել գուշակելու համար, որ Ղազախի գաւառը այս տարի սովի ճիրաններում պիտի գտնվի: Դեռ անցեալ աշնանը, կալոցից յետոյ, երբ շրջելով գիւղերը հատազվեցինք այդ բանի մէջ, կոչ արինք Ղազախի օտարաբնակ երիտասարդներին, յիշեցնելով նրանց, հայրենակիցներին օգնելու վեհ և մաքուր պարտականութիւնը: Սակայն ցաւում ենք, որ մեր կոչը և սովածների երկինք հասնող աղաղակը մնացել են «ձայն բարբառոյ յանապատի»: «Մշակում» հետզհետէ արձանագրվող փաստերը ոչ մի կասկած չեն թողնում հաժողելու համար մեր օտարաբնակներին, որ այսօր իրանց հայրենիքը տառապում է: հաց չը կայ, փող չը կայ, ծախելու ապրանք չը կայ, սովամահութիւնը սկսվել է, երեք-չորս օրով քաղցածներ կան...: Հեշտ է ասել 3—4 օր: Իսկ ինչ են մտածում և անում մեր գաւառի «երիտասարդները» թէ Թիֆլիսում և թէ մանաւանդ ոսկու տոպրակ Բագումում: Մինչև օրս ոչ մի տեղից օգնութիւն չը հասաւ տառապողներին: Մեր գաւառի հարուստները, ինտելիգենտները, ամեն աստիճանի զարգացած անհատները բաւականանում են միայն նրանով, որ սովածների ցուցակներ են կազմում: Ամսիս սկզբում Վ.-Աղդամ գիւղն էի գնացել. Սահակ Աղինեանցը կանչեց ինձ իր տուն՝ «փարատելու» նորածինը: Փարատելուց յետոյ, հարցրի՝ նորածինը տղա՞յ է թէ աղջիկ: Հայրը արտասուախառն պատասխանեց. «Տէրտէր ջան, երեխան բթարափ էլաւ»: Ինչու,— հարցրի: «Դէ մնց անենք. տեսնում ես կրակի չորս կողմն էդ տիլոր ըէխանցը. ոչ հաց ունենք, ոչ փող. ղորմի Այապի կնկայ հօրը. գնացել եմ 9 շահի առել, ժանեկողներից մի խան ալիւր եմ առել, էդ ա որ սաղի վրա հաց ենք թխում, մի քանի օր ա որ հաց չունենք. մօր ծծերումը կաթը չը կար. երեխէն չը ծծացրեց ու մեռաւ»—պատասխանեց ողորմելին: Այս պերճախօս փաստի առաջ ինչ դնենք: Մօտ 10—12 ժանկահասակներ մերկ... և քանի՞ այսպիսիներ: Սմատրոնց Գրիգորի կինը սովից մեռաւ, և այսօր էլ հաց չունի մօտ 10—12 հոգուց բաղկացած ընտանիքը: Գիւղերից մի առ մի օրինակներ բերելու դժուարանում ենք, ըստ որում չենք կարողանում ամեն տեղ գնալ ստուգելու համար եղելութիւնները. բայց արդէն սկսվել է...: Քրդվանում նոյն օրն եղել են մաՀվան դէպքեր, գիւղացին նոյնիսկ ամաչում է ասել թէ սովից մեռաւ...:

Վերջին անգամ հրաւիրում ենք գաւառիս օտարաբնակների ուշադրութիւնը իրանց հայրենեաց սովի վրա. շտապեցէք օգնել: Կառավարութիւնից նպաստ ստանալը, ոչ-ինչպէս ասում են զրկված են շատ գիւղերը—թէ ինչու, այդ միայն պօլիցիայի նրբամտութիւնը կարող է ըմբռնել—չէ կարող դրական ելք լինել. եթէ «ջնջված» գիւղերն էլ ստանալու չը լինեն, այն ժամանակ էլ Պետական Դումայում հերթական հարց կը շինեն՝—ինչպէս անել, որ սովից առաջացած համաճարակների առաջն առնվի: Եւ նորից միլիոններ, նորից պօլիցիայի ձեռամբ... նորից գիւղերի «ջնջումն»:

Ամսիս 12-ին Ղազախում ժողով պիտի լինի գաւառապետի մօտ. տեսնենք ինչ հետևանք կունենայ. կարծանմն «ջնջված» գիւղերի սովածներն էլ ժամն և բաժին ստանալ, թէ միայն կը տնքան:

Գիւղումս բացվում է Կովկասի հայոց բար. ընկ. տեղական ճիւղ, որի համար, 25 անձանց սոորագրութեամբ, դիմեցինք թոյլտուութիւն ստանալու. յուսով ենք թէ անդամների թիւը կը շատանայ:

Մեսրոպ ք. Էդիլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցօվ-Դաշկովի օֆիցէրական ծառայութեան 50-ամեայ յօբելեանին մասնակցելու նպատակով Պետերբուրգից այս քանի օրս մի քանի պատգամաւորութիւններ են սպասվում: Այսպէս օրինակ պատգամաւորութիւնները լինելու են Կայսերական Տան մինիստրութեան, ուղղիչ վարչութեան, հուսարական պալատական գնդի, Կարմիր Խաչի ռուսական ընկերութեան, պետական ձիաբուծութեան գլխաւոր վարչութեան կողմից և այլն:

◆ Թիֆլիսի զօրաբանակի գեներալ շտաբը և գլխաւոր օֆիցէրները, Կովկասի Փոխարքայի յօբելեանի առիթով, մարտի 26-ին կրուժօկի շինութեան մէջ նախաճաշ են սարքելու 400 հոգու համար:

◆ Թիֆլիսի կրուժօկի աւագների խորհուրդը, Փոխարքայի յօբելեանի առիթով, որոշել է մի ուղերձ ներկայացնել նորին պայծառափայլութեան յատուկ պատգամաւորութեան միջոցով:

◆ Յիշեցնում ենք, որ այսօր, երեկոյեան ժամը հինգ 7-ին, Թիֆլիսի բօրսային դահլիճում կայանալու է Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը: Որովհետև մի քանի կարևոր և անյետաձգելի հարցեր այդ օրը անպատճառ լուծում են ստանալու, ցանկալի է, որ ժողովին ներկայ լինի անդամների օրինական թիւ:

◆ Վաղը, կիրակի, Թիֆլիսի քաղաքային վարչութեան դահլիճում, առ. ժամը 10-ին նշանակված է տեղական ժուրնալիստների, գրողների ընդհանուր ժողովը՝ գրողների և ժուրնալիստների ընկերութեան կանոնադրութեան նախագիծը քննելու համար: Նոյն ժողովում կը քննվի նաև այն հարցը, թէ ինչ կերպ մասնակցել Լէվ Տօլստոյի յօբելեանին: «Т.Д.»-ի խմբագրութեան աշխատակիցներից մէկը հարց է յարուցելու նաև կիթողիկասութեան մասին:

◆ Թիֆլիսի 2-րդ արական գիմնազիայի արձակված 54 աշակերտներից 40-ը արդէն վերընդունվել են:

◆ Եղը. Զուբալօղները արտասահմանից հաղորդում են, որ Զուբալովի ժողովրդական տունը գործնականապէս քաղաքին յանձնելը տեղի կունենայ առաջիկայ երկու ամիսներում, երբ Թիֆլիս կը հասնի իրանց հաւատարմատարը:

◆ Մեծ պասի 6-րդ շաբաթին Թիֆլիսում սպասվում է Խարկովի համալսարանի պրիվատ-դոցենտ Կ. Խարիչկովը, որը կովկասագիտական բարձր դասընթացքներում մի քանի դասախօսութիւններ է կարդալու Կովկասի նաւթային հարստութիւնների մասին:

◆ Վաղը, կիրակի, Թիֆլիսի ժողովրդական համալսարանում Պաւլովը մի դասախօսութիւն կը կարդայ ուսերէն լեզուով էլեքտրականութեան մասին, որի ժամանակ ցոյց կը տրվեն նաև մի քանի փորձեր:

◆ Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել հետևեալը. ընկերութեան օգտին կայացած պարերեկոյթը, որ տեղի ունեցաւ 1907 թ.ի դեկտեմբերի 23-ին, տուեց հետևեալ արդիւնքը: Մուտք եղաւ. 1) տոմսակների վաճառքից և պրեմիաներից՝ 1422 ր. 35 կ., 2) նուէր պ. Փիթօյեանի գրասենեակից՝ 100 ր., 3) վիճակախաղից՝ 828 ր. 80 կ., 4) բուֆէտից և շաժպայն գինուց՝ 208 ր. 85 կ., 5) ծաղիկների վաճառքից՝ 190 ր. 25 կ., 6) petits chevaux 110 ր., ընդամենը 2860 ր. 25 կ.: Ծախք. 1) դահլիճի վարձ և լուսաւորութիւն՝ 223 ր., 2) երաժշտութիւն 115 ր., 3) ծաղիկներ 155 ր., 4) օպերային ծախքեր և վարագոյր՝ 178 ր., 5) բուֆէտ և շաժպայն՝ 85 ր. 75 կ., 6) յայտարարութիւն, տպագրական ծախքեր և ցրիչին 92 ր., 7) մանր ծախքեր և էլեքտրօտեխնիկին 50 ր. 65 կ., 8) մարկաներ՝ 70 ր., 9) ծառաներին՝ 40 ր., ընդամենը 1009 ր. 40 կ., մնում է զուտ արդիւնք 1850 ր. 85 կ.: Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը տիկին Տ. Մ. Սահակեանանին, օր. Օ. Ի. Մելիք-Բարախանեանին և ամբողջ երգեցիկ խմբին, որոնք առանց վարձատրութեան մասնակցեցին օպերային, նոյնպէս այն բոլոր անձանց, որոնք նպաստեցին երեկոյթի աջողութեանը իրանց նուէրներով կամ ժամանակցութեամբ և որոնք պատուեցին երեկոյթը իրանց ներկայութեամբ:

◆ Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսեցի Գիգօ Յարութիւնեան և քութայիսեցի Դէօրգի Գվինետաձէն, իբրև հասարակութեան և պետական կարգ ու կանոնի համար վերին աստիճանի վնասակար անձեր, զինուորական ամբողջ ժամանակամիջոցում աքսորվում են Թիֆլիսի գեներալ-նահանգապետութեան սահմաններից. Թիֆլիսեցիներ Նիկոլայ Սարգիսով, Զաղիէվ, Վասիլիյ Կապանաձէ և Վասիլիյ Մատացէվ՝ աքսորվում են Օրենբուրգի նահանգը. Ֆէօդոր Իսաէվը՝ երկու ամսով բանտարկութեան պարտադիր կանոնները խախտելու համար:

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Մարտի 12-ին կորել է 8 տարեկան մի աղջիկ, Մարիամ անունով. մօր անունն է Կատինկա Շիլայեանց, Թիֆլիսեցի: Աղջկայ նշաններն են. կերպարանքը սև, գլխի մազերը կարճ խուզած. մայրը բնակվում է Վօկզալնի փողոցում, «Բօրժօմ» հիւրանոցի բակում»:

◆ Ստացանք Շմեղի «Х հարուստը կռապաշտ» և «Մախաթի ծակում», 28 երես, գինն է 8 կօպէկ:

◆ Մարտի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին Հաւլաբարում, Վարշամեանի թատրօնի շէնքում, կայացաւ «Թիֆլիսի ծննդաբեր կանանց փոխադարձ օգնող II ընկերութեան» անդամների ընդհանուր ժողովը: Ներկայ էին մօտ 500 անդամներ. ընկերութեան վերատեսուչ յանձնաժողովի տուած զեկուցումից երևաց, որ ընկերութիւնն ունի 748 անդամներ, որոնք անդամ գրվելու համար վճարել են 2 ր. 35 կօպ.: Անդամավճարների ընդհանուր գումարը կազմում է 1757 րուբլի 80 կօպ., ամեն մի անդամ ընկերութեան դրամարկղն է մտցրել անդամակցական վճարներից նաև 60, 70 և 80 րուբլի առանձին վճարներ, որոնք կազմում են 26,462 րուբլի 90 կօպ., նախկինի հետ միասին ընկերութիւնն ունի ուրեմն 28,241 րուբլի 20 կօպ., բացի դրանից վարչութիւնը ընկերութեան մի քանի անդամների տուգանքի է ենթարկել, վերցնելով նրանցից 20 ր. 50 կօպ.: Ընկերութեան 784 անդամներից միայն 300 հոգին նպաստներ են ստացել ընկերութիւնից, ամեն մէկը 120—130 րուբլի: Դա կազմում է 16,387 րուբլի 85 կօպ.: Վարչութիւնը, որը բաղկացած է երեք անդամից, երկու ամսվայ ընթացքում իր «անհրաժեշտ» ծախսերի համար ծախսել է 900 ր., գրասենեակի ծախսերը հանում են 300 ր. 54 կօպ.: Ներկայումս ընկերութեան դրամարկղում կայ 4400 րուբլի, որի կէսը 2200 րուբլին ուսանող Խրիս. Մնացականեանի անունով դրված է Ազօվկի-Դոնսկոյ բանկը, իսկ միւս կէսը դարձեալ մտցված է նոյն բանկը պ. Մնացականեանի կնոջ՝ քոյր՝ Օլգա Յովհաննիսեանի անունով: Ներկայումս ընկ. դրամարկղից պակասում է 6252 ր. 81 կօպէկի մի գումար: Այդ գումարից 3025 ր. 25 կօպէկի զանազան հաշիւներ կան, որոնք բոլորովին պարզ չեն. իսկ մնացած գումարը գրքերում չէ նշանակված և յայտնի չէ, թէ դա ինչի վրա է ծախսվել: 443 անդամներ, որոնք անդամակցական վճարներ են տուել՝ ընդամենը՝ 17,200 րուբլի, դեռևս ոչ մի կօպէկ չեն ստացել ընկերութիւնից: Ապա վերատեսուչ ժանանժողովը զեկուցում է, որ կատարվել են մի շարք կեղծիքներ, որ զանազան մութ անձնաւորութիւններ կեղծ տեսքերով ընկերութիւնից ստացել են նպաստներ. այդպիսիների թիւը հասնում է 28-ի: Դրանցից մէկը մտցնելով ընկերութեան դրամարկղը 2 ր. 50 կօպ., ստացել է 60—70 րուբլի: Վերջը ընդհանուր ժողովը սկսեց պահանջել վարչութիւնից, որ բաւարարութիւն տրվի բոլոր անդամներին: Ժողովատեղին վերածվեց մի խառնարանի, մէկը միւսին չէր հասկանում: Ընկ. հիմնադիր պ. ուսանողը փախել էր ժողովից: Վարչութեան անդամուհի Թալիկօ Աստուածատրեանը վերջում ստիպված եղաւ ստորագրութիւն տալ, որ իր վրա է վերցնում բանկից յետ ստանալ այն 4460 րուբլին, որ ուսանողի և նրա բարեկամուհու անունով բանկ է մտցված: («Վա.»)

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է քաղաքային վարչութեան, չը սպասելով քաղաքային ելևմտի նախահաշուի հաստատվելուն, գործադրել այն 400 րուբլին, որ որոշված է քաղաքային ինքնավարութեան ծառայողներին նպաստ տալու համար:

◆ Թիֆլիսի նահանգապետը տեղեկացրել է Թիֆլիսի քաղաքագլխին, որ քաղաքային կանոնադրութեան 83-րդ յօդուածի համաձայն՝ նա դադարեցնում է քաղաքային դումայի փետրվ. 28-ի հետևեալ որոշումները. 1) բանոր Խալաթ Գրիգորեանին 20 րուբ. ամսական նպաստ տալ. 2) քաղաքային վարչութեան նախկին ծառայող Լևոն Մաժուլովի կնոջը 900 րուբլի նպաստ տալ: Նահանգապետը իր կարգադրութիւնը հիմնում է նրա վրա, որ Թիֆլիսի գեներալ-նահանգապետը այդ հարցը Դումայի քննելի օրակարգից հանել էր:

◆ Կովկասեան ճանապարհների հաղորդակցութեան կառավարչի օգնական նշանակվելու է Կազանի ճանապ. հաղ. կառավարչի օգնական ինժենէր Նեֆիդիեվը:

◆ Թիֆլիսում, մարտի 20-ին, ուտիկանութիւնը գրաւեց Բագումում լոյս տեսնող մահմեդական «Վայ-վայ» երգիծաբանական թերթի 2-րդ համարը:

◆ Թիֆլիսի կրուժօկի աւագների խորհուրդը որոշել է ամառվայ սեզօնին հրաւիրել սիմֆոնի երաժշտախումբ, յատկացնելով այդ նպատակին 14,000 րուբլի: Երաժշտախումբը արդէն կազմված է 46 հոգուց և այժմ բանակցութիւններ են տեղի ունենում մի քանի օպերների հետ: Երաժշտախումբը ամառային շինութեան մէջ նուագելու է մայիսի 15-ից մինչև սեպտ. 1-ը:

◆ Թիֆլիսի ուտիկանապետ Յիխօցկին կենդանիների հովանաւորող կովկասեան ընկերութեան պատուաւոր անդամ է ընտրվել:

◆ Մարտի 20-ին «Кавказъ» լրագրի խմբագրատունը քաղաքային պօստով ստացել է հետևեալ բնորոշ յայտարարութիւնը. «Բաթումում, Քութայիսում և Փօթիում փողեր են ստացվել կեղծ փոխանակագրերով: Թող շահախնդիր հաստատութիւնը մամուլում մրցանակ նշանակէ այդ զանցառութիւնը բաց անողին»:

◆ Բարերարների ուշադրութիւնն ենք հրաւիրում Նորաշէնսկի փողոցում № 16 տանը ապրող Կատարինէ Յարութիւնեանի չքաւոր դրութեան վրա, որ ունի մի հիւանդ աղջիկ և ինքն էլ հիւանդ լինելով՝ չէ կարողանում գտնէ հաց հացնել:

◆ Թիֆլիսում, մարտի 20-ին, վարժուհիների շինութեան մէջ, կայացաւ Թիֆլիսի մանկավարժների ժողովը Վիլիամսի նախագահութեամբ: Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշվեց ընկերութեան անդամ ընդունել և ոչ-մանկավարժների: Իսկ մինչև կանոնադրութեան հաստատվելը պատշաճ իշխանութիւնից, ժողովը ութ հոգուց մի մասնաժողով ընտրեց՝ գործերը կառավարելու համար:

◆ Թիֆլիսի ուտիկանապետը կարգադրել է պրիստաւներին՝ հսկել, որ դռնապանները ասն աղբը փողոցի ջրանցքի խողովակները չածեն:

◆ Թիֆլիսի վրաց սեմինարիայում երեսան հանված 50 հատոր հանրագիտակաան բառարանի գողութեան պատճառով սեմինարիայի վարչութիւնը արձակել է 9 աշակերտների:

◆ Քութայիսում ձերբակված Պետական Դումայի նախկին անդամ Ս. Զափարիձէին որոշ ժամանակով ազատ են թողել:

◆ Քութայիսում նահանգապետը մասգործներին ենթարկել է իւրաքանչիւրին 25-ական ռուբլի տուգանքի նրա համար, որ նրանք միսը վաճառում են որոշված սակագնից բարձր գներով:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Մարտի 19-ին, երեկոյեան ժամը 10-ին, Պետրովսկի տուպիկում, բանուոր Ամիր Եհիմ-օղլին տուն վերադառնալիս կանգնեցրել են 4 անյայտ չարագործներ և փող են պահանջել. բայց երբ նա մերժել է, չարագործները դանակով գլխից և

ձեռքից թեթև կերպով վիրաւորել են նրան և անյայտացել։

◆ Մարտի 20-ին Տօլչէի գործարանի մեքենագործ Յովհաննէս Ունանեանցը յայտնել է ուտիկանութեան, որ այդ օրը իր բնակարանից (գործարանի շինութեան մէջ) գողացել են 425 բուբլու զանազան ոսկէ իրեր և 10 ր. կանխիկ դրամ։ Գողութեան մէջ կասկածվում է նոյն գործարանի գործակատար Խվիչիայի կինը՝ Անասասիան, որը ձերբակալված է և դատի է ենթարկված։

◆ Մարտի 20-ին, երեկոյեան մօտ 8 ժամին, Մարդոբակայա փողոցում ատրճանակի հարուածներով մէջքից վիրաւորել են Նինա Գօշնիձէին, իր ամուսնու հետ անցնելիս։ Ինչպէս պարզվել է, Գօշնիձէն պօստով մի նամակ է ստացել շանտաժիստներից, որոնք պահանջել են 200 բուբլի։

ՄԱՄՈՒԼ

«Վտակը» սաստիկ զայրացել է «Մշակի» այն առաջնորդողներից, որոնց առաջինի մէջ Ալ. Քալանթաը դատապարտում էր «դասակարգային կռիւ» ծրագիրը, որ ծրագրել են դաշնակցականները, իբրև մի ծրագիր, որ այժմ ոչ մի հող և արդարացումն չունի Թիւրքիայում և կարող է վերջանալ նորանոր կոտորածներով, իսկ երկրորդի մէջ Հ. Առաքելեան դատապարտում է նոյն դաշնակցականների «յեղափոխական» գործողութիւնները վերջերս Վանում, որոնց հետևանքը լինում է միայն ընաջնջումն հայ տարրի Հայաստանում։

Ի՞նչպէս է պատասխանում «Վտակը» մեղմի շատ անհեթեթ և ծիծաղելի առարկութիւնով։ Նա ասում է, որ մի տարի առաջ «Մշակը» կարմիրից էլ կարմրագոյն էր, որ նա մի տարի առաջ օգտակար էր համարում հայ յեղափոխականների գործունէութիւնը Թիւրքիայում, որովհետև «Մինրանթէչեան» խմբակին ապաստան էր տուել և նրանց «հեղինակաւոր ձայնը» լսեցնել էր տալիս իր էջերում։

Ուրեմն քանից դուրս է գալիս, որ Միհրանը մի իսկական հայ յեղափոխական էր, կարմիրից էլ կարմիր. բայց ինչո՞ւ այն ժամանակ նա, այդ Միհրանը, «Վտակի» և իր տխրահռչակ նախորդների կողմից շարունակ հռչակվում էր իբրև շանտաժիստ, դաւաճան։ Եւ ինչ կապ ունի Միհրանը յարուցված խնդրի հետ։ Միհրանը մի դաշնակցական գործիչ էր, փառաբանված դաշնակցականներից, իբրև հերոս։ Երբ Դաշնակցութեան մի մասը ծրագրեց իր համար «սօցիալիստական» գործունէութիւն, Միհրանը արտայայտիչ հանդիսացաւ այն թիւրքահայ ստուար մեծամասնութեան հայացքների, որ չէր ընդունում Դաշնակցութեան համար ոչ միայն «սօցիալիստական», այլև որևէ գործունէութիւն Թիւրքական-Հայաստանից դուրս և պնդում էր, որ Դաշնակցութիւնը ստեղծվել է միայն մի նպատակի համար—հայոց հարցի համար, Թիւրքիայի հայ ժողովրդի համար։ Ապա Միհրան սկսեց երևան հանել դաշնակցական շատ շէֆերի և բիւրօյի կատարած գործունէները։

«Մշակը», իբրև հասարակական օրգան, բարոյապէս պարտաւոր էր հասարակութեան մէջ առաջ եկած մի զօրեղ հոսանքի կամ հերձուածի մասին լուութեամբ չանցնել և լուսաբանել նրան։

«Սօցիալիստ» դաշնակցականները Միհրանին հրատարակեցին շանտաժիստ, Միհրանը և նրան հետևողները իրանց հակառակորդներին էին անուանում շանտաժիստ։ «Մշակը» այդ կուսակցական ներքին կռիւներին չէր խառնվում. նրան չէր կարող հետաքրքրել այն, թէ ովքէ շանտաժիստ.—Միհրանը թէ՞ հակառակորդները. նա տեղ էր տալիս Միհրանի յօդուածներին այն չափով, որ չափով նրանք կարողանում էին պարզել, լուսաբանել ծագած մեծ հերձուածի էութիւնը, որ և շատ լաւ պարզվեց և պարզվել է այսօր հայ ժողովրդի համար։ Միհրանի գործունէութիւնը, իբրև դաշնակցականի, եթէ նա ևս այսօր աշխատէր այնպիսի «յեղափոխական» դէպքեր առաջ բերել, որոնց հետևանքը հայերի կոտորածը լինէր Հայաստանում, մենք առանց վարանելու կը դատապարտէինք։

Այս բացատրութիւնը տալուց յետոյ՝ մենք ուղղակի պատասխանում ենք «Վտակին»։ Այո, դաշնակցականների յեղափոխական գործողութիւնները այն ձևով, որով նրանք այժմ կատարվում են, մենք հաժարում ենք «աղէտաբեր» և դատապարտելի, որովհետև մենք այն կարծիքի ենք, որ դաշնակցականների ըմբռնած «յեղափոխական» կամ աւելի ճիշտն ասած՝ «քաղաքագիտական» գործողութիւնները ոչ միայն մաքաչափ օգուտ չեն բերում և չեն կարող բերել Թիւրքիայի հայ ժողովրդին, այլ դառնում են և կը դառնան աղբիւր ամեն տեսակ աղէտների և բնաջնջման։ Ո՞ւմ համար է պէտք ազատ ազատութիւնը, եթէ այդ ազատութիւնը կը գայ այն օրը, երբ Հայաստանում այլ ևս մի հատ հայ չի մնայ։ Մի երկիր, որտեղ հաւասարապէս հարստահարված, ճնշված է և մարդկային տարրական իրաւունքներից զրկված և հարուստը, և աղքատը, և մեծը, և փոքրը, և արհեստաւորը, և վաճառականը, և բանւորը, և կղերը, և բուրժուան, և պրոլետարը—այդպիսի մի երկրում դուք կամենում էք միաժամանակ և ապստամբեցնել ժողովուրդը բռնակալ ըէժիմի դէմ և «դասակարգային կռիւ» ծարծել։ Մի՞թէ սա հնարաւոր է. մի՞թէ դա ուտոպիա չէ. իսկ չէ՞ որ այդ ուտոպիաների հետևանքը լինում են միայն և եթէ կոտորածներ, այն ևս միայն և եթէ հայերի կոտորածներ։

Ինչ վերաբերում է «Վտակի» տգեղ ակնարկներին, թէ «Մշակը» թիւրքաց կառավարութեան կարծիքների արտայայտիչ է հանդիսանում, դրան կը պատասխանենք. ժամանիչները, ինչպէս փորձից գիտէք, հէնց մատնիչ Դաւթի օրինակից, ուրիշ շարքերի մէջ պէտք է որոնել...

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

21 մարտի

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Սենատի տնտեսական վարչութեան վճռին՝ բարձրագոյն բարեհաջողութեան ներկայացնել սենատօրների այժմեան կազմը լուծելու հարցը՝ մի քանի ժողովներ հետևեցին, որոնց մէջ մասնակցութիւն ունեցան նաև սէյմի ֆրակցիաների ներկայացուցիչները։ Հրաժարականի ընդունված վճիռը չէ տարածվում դատական վարչութեան վրա, որին սէյմի արտայայտած անվստահութիւնը չէ վերաբերում։

Տեղական լրագիրների լուրերի համաձայն, սենատի փոխ-նախագահ Միխելինը դիմել է գեներալ նահանգապետին մի նամակով, որով բացատրում է այն շարժառիթները, որոնք դրդեցին անտեսական վարչութեան անդամներին՝ միջնորդութիւն յարուցել հրաժարականի մասին։ Միխելինը գեներալ-նահանգապետի ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ նա, գեներալ-նահանգապետը, միայն իրաւունք ունի առաջարկել սենատի նոր կազմի թեկնածուներին, և մատնանշում է, որ ցանկալի է նախօրօք լսել սէյմի տալմանի և կուսակցութիւնների լիդէրների բացատրութիւնները, որով թերևս հնար լինի ստանալ սէյմի վստահութիւնը ապագայ կազմի վերաբերութեամբ։ Վերջում Միխելինը յայտնում է, որ սենատը կը սպասէ գեներալ-նահանգապետի պատասխանին, թէ արդէն կազմած է նոր սենատօրների ցուցակը, որպէսզի ամենահպատակ խնդրագիր ներկայացվի հրաժարականի մասին։

Գեներալ-նահանգապետը մեկնեց Պետերբուրգ։

Արտաքին

20 մարտի

ՊԱՐԻԶ։ Գեներալ Դամատը հաղորդում է, որ ֆրանսիական զօրքերը Մտակրա նահանգում առաջ գնալու ժամանակ ենթարկվեցին 300 մարօկցիների յարձակման։ Թշնամին յետ նահանջեց մեծ կորուստներով մինչև Ուէդպէկ գետի ձախ ափը։ Ֆրանսիացիները կորցրին 8 սպանված և 12 վիրաւորված։

21 մարտի

ԲԷԼԳՐԱԴ։ Սկուպշչինա։ Երիտասարդ արմատական Պէչինը մինիստր-նախագահից խնդրում է բացատրել՝ թէ արդեօք սերբ կառավարութիւնը հարկաւոր ուշադրութիւն դարձրել է Մակէդոնիայի նահանգապետ նշանակելու անգլիական առաջարկութեան վրա։ Մինիստր-նախագահը պատասխանեց, որ կառավարութիւնը հարցին վերաբերվում է լիակատար ուշադրութեամբ և հետևում է նրա զարգացմանը։

ԲԵՐԼԻՆ։ Տեղիս արտաքին գործերի մինիստրութեան ստացած տեղեկութիւններից, երևում է, որ բոլոր պետութիւնները, որոնց թւում և Անգլիան, վերին աստիճանի հաւակերանքով են վերաբերվում բարենորոգումների ռուսական առաջարկութեանը։ Եթէ Անգլիան մինչև օրս իր առաջարկութեան վրա պնդում էլ է. բայց և այնպէս Գրէյը պատրաստ է ճանաչել ռուսական առաջարկութիւնները իբրև հաժաձայնութեան հիմք և քննութեան ենթարկելնրանց անգլիական առաջարկութիւնների հետ միասին։ Շնորհիւ ռուսական առաջարկութիւնների, որոշ յոյս կայ, որ այժմ կաջողվի շուտով մակէդոնական բարենորոգումների գործը բարեյաջող վախճանի հասցնել։

ԼՕՆԴՕՆ։ «Դէյլի Նիւսը» ասում է. «Բարենորոգումների ռուսական նախագիծը չէ կարելի հաժարձակ անուանել, չէ կարող խանդավառութիւն առաջ բերել. սակայն Ռուսաստանը իր անկեղծութեան իրական ապահովութիւնը տուեց, առաջարկելով որ բոլոր պետութիւնների ներկայացուցիչները, որոնք մտնում են ֆինանսական մասնաժողովի կազմի մէջ, ռուսական և աւստրօղովի կազմի մէջ, ռուսական և աւստրօունդարական գործակալների հետ համատեղաբար իրաւունքներ վայելեն ընդհանուր կօնտրոլի գործում։ Ռուսական առաջարկութիւնները ուրախական մասնաժողովին կարող են բարենորոգումների իսկական մարմին վերածել և զարգացնել նրա միջազգային բնաւորութիւնը, բայց նրանք զլխում են բրիտանական առաջարկութիւններին նրանում, որ սուլթանին են վերադարձնում նրա նախկին իշխանութիւնը, որ բաց դաշտ է ինքնին զանցառութիւնների համար։

ԲԵՐԼԻՆ։ Ռէյխստագում կարդացվեց միութիւնների և ժողովների օրինագիծը երկրորդ անգամ։ Առաջին գլուխը, որ խօսում է ժողովների իրաւունքի և միութիւնների հիմունքների մասին, ընդունվեց ձայների մեծամասնութեամբ։ Ներքին գործերի մինիստրը խօսեց այն մասին, որ օտարազգիներին իրաւունք չը պէտք է տրվի ժողովներին մասնակցելու։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԳՆԵՐԸ

21 մարտի 1908 թ.

Տոկոսաբեր արժեթղթեր

Տոմսակ I փոխ. վիճակախաղի	349 ր. — կ.
Տոմսակ II փոխ. վիճակ.	259 ր. — կ.
Տոմսակ III փոխ. Ազն. Բանկի	237 ր. — կ.
4% Պետական Բնտա	76 ր. 87½ կ.
5% փ. թ. Պետ. Ազն. Հ. Բ.	85 ր. 25 կ.
4½% փ. թ. Պետ. » » »	78 ր. 75 կ.
4% փ. թ. Պետ. » » »	73 ր. — կ.
3½% Գրաւ. թ. Պետ. » »	70 ր. 25 կ.
5% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	86 ր. — կ.
4½% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	78 ր. 75 կ.
4% Վկայ. Գիւղ. Հող. Բանկի	72 ր. 75 կ.
5% Ներքին փոխ. 1905 թ. I	96 ր. 75 կ.
5% » » » » II	96 ր. 75 կ.
5% Արտաքին փոխ. 1906 թ.	95 ր. 37½ կ.

ԲՕՐՍԱ

Լօնդօնի վրա 10 ֆ. ստ. արժէ	95 ր. 75 կ.
Բերլինի վրա 100 մարկը »	46 ր. 81 կ.
Պարիզի վրա 100 ֆրանկը »	38 ր. 4 կ.
Նաւթ. թղթ. Նօրել ընկ.	» 11,225 ր. — կ.
Կասպիական ընկ. ակցիա	» 4100 ր. — կ.
Բագուի ընկ. »	» 506 ր. — կ.
Մանթաշեանի »	» 158 ր. — կ.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Գուլկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԸՆԱՐՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—9½—2 ժ. առամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Հիւանդները բերեն իրենց հետ սրբոցը (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ և ուղարկվեց բոլոր բաժանորդներին

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական—Գրական—Գեղարուեստական պատկերազարդ երկշաբաթաթերթի բ. տարեշրջանի № 1-ը, հետևեալ բովանդակութեամբ

Նոր տարեշրջան.—Դպրոց և թատրոն.—Գաւառի բեմական կարիքը.—Անցեալի յիշատակին.—Բանաստ.—Ծագումը.—Ներքին գործ. նախարարի շրջաբերականը.—Ծաղկից հիւսած.—Դրամատիկ. դերասանների ընկերակց. ներկայացումները.—Նոր տեսակի համաճաշակ.—Նիւթեր հայ թատրոնի պատմութեան համար.—Բաղդասար աղբօր նամակները.—Նամակներ խմբագրութեան.—Թատերական քրոնիկ.—Լուրեր.—Նոր ստացած գրքեր.—Յայտարարութիւններ.—Պատկերներ.—Տ. Հրաչեայ.—Խորէն եպիսկոպոս Ստեփանէ.—Թատրոնի սկզբնաւոր հիմնադիրներից մէկը. (տես «Յուշարար» № № 15—16).—Գիշերը Գուրգենովում.—1879—80 թ. Թիֆլիսի դերասանական խումբը։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է. տարեկան 5 ր., արտասահման 6 ր.։ Հասցէն՝ Թիֆլիս, Սօլօլակի փ. տ. Օրբէլիի, № 14. օտար քաղաքացիք պէտք է դիմեն Тифлисъ, редакція „Ушараръ“.

Այս համարի հետ ի հաշիւ 1907 թ. բաժանորդներին ուղարկվեց 2 պիէս. 1) «Դոն Պիէտրօ Կարուէզ», դրամ 1 գ. և 2) «Կարմիր Ծաղիկ» աշակերտական պիէսը 3 պատկ.

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

կիրակի, մարտի 23-ին

ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ

մասնակցութեամբ

դերասանուհի օր. Ադամեանի և դերասան պ. Ա. Արմենեանի

կը ներկայացվի

ԱՒԱԶԱԿՆԵՐ

ողբերգ. Չիլերի, 5 գործ.

Մասնակցում են՝ օր. Ադամեան, պ. պ. Ա. Արմէնեան, Գ. Իգէկեան, Վ. Միրզոյեան և ուրիշներ։

Սկիզբը ժամը 8-ին

Տեղերի գները սովորական են

Բեմադրութիւնը՝ Ա. Արմէնեան

Հայոց դրամատիկ. ընկերութ. վարչութիւն

(շ. կ.) 2—1

ԹԻՖԼԻՍԻ

Լրագրավաճառների Ընկերութեան Բիւրօն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ է

Ընկերութեան բոլոր անդամներին և անդամ գրվել ցանկացողներին, որ մարտի 24-ին (երկուշաբթի օրը ժամը 3-ին) լինելու է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում

հետեւեալ հարցերով զբաղվելու

ա. Նոր բիւրօյի անդամներ ընտրելու։

բ. Ելեմտական հաշիւը ստուգել ու կանոնաւորել։

գ. Ընկերութեան ծրագիրը քննութեան ենթարկել, եթէ անօգուտ կամ անհամապատասխան կէտեր կան՝ փոխել, իսկ եթէ լրացուցիչ յօդուածներ՝ նախատեսվին, կազմվեն։

դ. «ԼՈՒՖԼԻԿՏ» անունը տալ մեր ընկերութեան և, փոփոխված կանոնադրութեան հետ, բարձր իշխանութեան հաստատութեանը յանձնելու հարցը։

ե. Ընկերութեան կանոնադրութիւնը հրեք լեզուով (հայերէն, վրացերէն և ռուսերէն) հրատարակելու հարցը։

զ. Քննել լրագիրների յետ չը վերցնելու հարցը։

է. Ընկերութեան գրասենեակ վարձելու հարցը։

Մեր ընկերութիւնը ոչ մի առնչութիւն ունենալու չէ որևէ քաղաքական կուսակցութեան հետ։

1—1 Բիւրօյի անդամներ

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.

(ա. օ.) 100—19

ՀՐԱՒԷՐ

Վանքի աւագ եկեղեցում, կիրակի, մարտի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, կը կայանայ երրորդ ծխական ժողով, նոյն եկեղեցու համար

1. Մի քահանայացու ընտրելու.

2. Քարոզիչ և երգեցիկ խումբ հրաւիրելու.

3. Եկեղեցու նիւթական դրութեան մասին խորհրդակցելու։

Ուստի սրանով հրաւիրվում են վերոյիշեալ ժողովին մասնակցելու Վանքի աւագ եկեղեցու 21 տարեկանից սկսած երկու սեռի ծխականները։

Ծխական հոգաբարձութիւն

Երէց-փոխ՝ Զ. Մաժուլեան

(22) 2—2

ՀՐԱՒԷՐ

Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցու ծխականները հրաւիրվում են

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որ կայանալու է կիրակի, մարտի 23-ին, առաւօտեան 11 ժամին։

Զբաղմունքի առարկաներն են.

1) 1906 և 1907 թ. հաշիւ.

2) 1908 թ. նախահաշիւ.

3) Հոգաբարձական կազմի ընտրութիւն.

4) Ընթացիկ հարցեր։

(ու. շ.) 2—2

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ պատենամ

ՀՐԱՇՔ-ԽՈՀԱՆՈՅ № 24888

„ՄԻԿՐՕ“

Վարձատրված է մեղալով տնային տնտեսութեան ցուցահանդէսում, Անտվերպէնում, 1907 թ.։ Շատ օրիգինալ և գործնական նորաձևար գործիք, որ պարունակում է հետեւեալ առարկաները. ապպարատ խոհանոց, չոր, յաւիտեան չը փչացող մասայով, որի շնորհիւ ապպարատ խոհանոցը վայրկենապէս վառվում է և այրվում է զօրեղ բոցով, առանց մուրի և վատ հոտի. ծախսվում է 1կ. մէկ ժամում. միանգամայն անվտանգ։ 2) Սիրուն պղնձէ աման աֆրիկ. արծաթ-ալլիումինի կոթով։ 3) Նոյնպէսի թավա։ 4) Գործնական սրճաման։ 5) Դալ-թէյման մակադիր արծաթից։ «Խոհանոց-Հրաշքը» անհրաժեշտ է իւրաքանչիւր կարգված և անպակ մարդուն։ Պ. պ. օֆիցէրներին անփոխարինելի է պատերազմի ժամանակ։ «Խոհանոց-Հրաշքը», շնորհիւ այն բանի, որ ծալվում է, ճանապարհորդական իսկական գործնական խոհանոց է։ Ամբողջ ապպարատի գինը իր մասերով 3 ր., 3 հատ՝ 8 ր. 40 կ.։ Ուղարկելու համար 45 կ.։ Ախիսկան Ռուսաստան 65 կ.։

Հասցէ. Фабрика М. А. Кадлубокъ. Варшава, Кармелицкая 9.

Գրագրութիւնը ռուսերէն և գերմաներէն լեզուներով։

(7, 22, 6) (8930) 3—2

ՆՈՐ ԳԻՒՏ

ԲՕՐՆՕ ՆԱՖԹԱԼԱՆ

Բոլորովին փչացնում է գլխի թեփը, պիրքացնում մազերը, նպաստում է նրա բուսնելուն և տալիս է նրան իսկական տեսք։

Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, որպէս չը պարունակող ոչ մի վնասակար նիւթ։

Վաճառվում է՝ Кавказское Т-во торгов. аптек. товарами; Офицерское Экономическое общество и въ ихъ отдѣленіяхъ. դեղատներում, դեղավաճառների և հոտաւէտեղէն ծախողների մօտ։

(7,22) 25—18

ՆՈՐ-ԴՊՐՈՑ

ԱՄՍԱԴԻՐ

Հրատարակութիւն Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միութեան կենտրոնական խորհրդի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ—Աբեղեան Ա., Աբովեան Ս., Յարութիւնեան Իս., Ռաֆայեան Տ. եւ Տէր-Միրաքեան Յ.

Ապրիլ ամսից լոյս կը տեսնի «Նոր-Դպրոցը» հետևեալ ծրագրով.

I. Տեսական և գործնական մանկավարժութիւն.

II. Հոգեբանութիւն, բարոյագիտութիւն և գեղագիտութիւն.

III. Դպրոցական կեանք.

IV. Դպրոցական առողջապահութիւն և վիճակագրութիւն.

V. Քննադատութիւն և գրախօսութիւն։

Բաժանորդագրութիւն ընդունվում է վեց ամսով ապրիլից—սեպտեմբեր

	տարեկան	կէսամեայ
Բաժնեվճարն է		
Միութեան անդամների համար	3 բուբլի	2 բուբլի
Ոչ անդամների համար	5 բուբլի	3 բուբլի

Առանձին հատորները՝ 50 կոպ։

Բաժանորդագրութեան տարին հոկտեմբերից—հոկտեմբեր է։ Այժմ բաժանորդագրութիւն ընդունվում է ապրիլից մինչև սեպտեմբեր։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала „НОРЪ-ДПРОЦЪ“, Бебутовская № 30. Tiflis (Caucase) Rédaction du journal «NOR-DPROTZ»

Խմբագիր՝ Իս. Յարութիւնեան

(շ. շ.) 2—2

Типографія „Экономія“ Авака Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.